

## ԳՐՈՂԻ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԳԼԸ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(Գուրգէն Մահարի - Գրիգոր Շահինեան)

**Գուրգէն Մահարու նամակագրական հարուստ ժառանգութիւնից** (հաւաքուած եւ ծանօթագրուած է աւելի քան 800 նամակ, որոնք սպասում են Հրապարակման ժամին) ներկայացւում է համեստ մի նամակատուի: Հայաստանեան գլողներից Մահարին էր որ ունէր ամենալայն սփիւռքահայ կապերը: Շահան Շահնուր, Համաստեղ, Արամ Հայլազ, Զարեհ Որբունի, Անդրանիկ Մառուկեան, Մարի Աթմաճեան, Աւետիս Ալիքսանեան, Սիմոն Սիմոնեան, Կարիկ Պասմաճեան - մօտաւոր ցանկը սփիւռքահայ մտաւորականների, որոնց հետ նա ունէր տեւական նամակագրութիւն: Նրանցից շատերի մասին Մահարին դըել է ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ: Միանգամայն հակառակն է բէյրութահայ գրականադէտ եւ ուսուցիչ Գր. Շահինեանի պարագան: Վերջինս հեղինակն էր Սփիւռքում լոյս տեսած «սովետահայ» գրողներից մէկի մասին միակ մենագրութեան եւ այդ «մէկը» Գուրգէն Մահարին էր: Մենագրութիւնը կոչւում էր «Գուրգէն Մահարին վաթսունի հանգրուանին»: Լոյս տեսաւ 1964 թուականին:

Առաջին քայլը գրականադէտինն էր: Դեռ մենագրութիւնը լոյս չտեսած, նա նոր տարուայ շնորհաւորական ուղարկեց հայաստանեան իր այցելութիւնից արդէն ծանօթ Գուրգէն Մահարուն, որին հետեւեց գրողի պատասխան-նամակը:

(Մահարու նամակները տպագրուում են դասական ուղղագրութեամբ: Մնացածում առաւելագոյնս պահպանուել են կողմերի կէտագրութիւնը եւ ուղղագրութիւնը, ինչն առանձին դէպքերում կարող է թողնել տարընթերցումների տպաւորութիւն):

**Գուրգէն Մահարին – Գրիգոր Շահինեանին,**

20 Յունուարի 1964 թուականի, Երեւան

**Շատ սիրելի Գրիգորին!**

Նոր տարուայ շնորհաւորականդ<sup>1</sup> ստացայ մեծ ուրախութեամբ. շատ շնորհապարտ եմ, որ ինձ չես մոռացել:

Յօդուածներիդ երեք մասերը կարդացի «Բագին»ի մէջ<sup>2</sup>. յատկապէս երկրորդ եւ երրորդ մասերի մէջ ինձ համար անակնկալ, վերլուծական հետաքրքիր էջեր գտայ: Նորից շնորհապարտ եմ:

Եթէ «Բագին»ի խմբագիրներուն մէջ ծանօթ մարդ ունես, իմ անունից ինդրէ, թող մի օրինակ «Բագին» ուղարկեն ինձ. փոխարէնը կարող եմ ուղարկել իրենց ցանկացած գիրքը կամ հանդէսը: Թող զրկեն տանս, քո ունեցած հասցէով: Ասոր համար ալ շնորհապարտ պիտի լինեմ... ստանալէն ետք:

Զերմ բարեւներ: Քեզի միշտ կը յիշեմ: Ե՞րբ պիտի նորէն դաս:

**Երեւանեան ողջոյններով՝ Գ. Մահարի**

**Հասցէս՝ ծրարի վրայ:**

**Գրիգոր Շահինեանը – Գուրգէն Մահարուն,**

29 Փետրուարի 1964 թուականի, Պէյրութ

**Շատ սիրելի Գուրգէն խան<sup>3</sup>.**

Մեծ, մէ՛ծ հաճոյքով ստացայ 20 Յունուարի ձեր նամակը, անմիջապէս կատարեցի ամսագրի առաքումին վերաբերող ձեր պատուէրը եւ երկա՛ր վայելեցի գրածիս մասին ձեր ըսածները:

<sup>1</sup> Գր. Շահինեանի շնորհաւորականն ունէր հետեւեալ բովանդակութիւնը. «Սիրելի Գուրգէն խան» նոր տարին նոր ուրախութիւն ըլլայ ձեզի, գրականութեան հին սէր, պար ու երգ: Եւ ձեր ու մեր հաճոյքին համար հասցնէ ձեզի մեր առիւրը. Ամէնս Գրիգոր Շահինեան»:

<sup>2</sup> Խօսքն առաջաբանում յիշուած մինագրութեան առանձին գլուխների հրապարակման մասին է:

<sup>3</sup> Գրական միջավայրում յայտնի էր, որ Զարենցը Մահարուն կանչում էր Գուրգէն-խան:

Հոստեղին եղած առաքումին փոխարէն բան դրկելու պէտք չունիք: «Մէր մէջ խօսիլն աւելորդ է»<sup>4</sup> նոյնիսկ նման փոխանակութեան մը մասին: Ամբողջ հաճոյքը դրկողներունն է: Պէտք ունի՞մ աւելցնելու որ կրնաք, ամէն առիթով, ո՞րեւէ գրքի մասին գրել ինծի: Կը գտնեմ, կը դրկեմ, կ'ուրախանամ:

«Մահարի»ս, ի՞մս, մամուլի տակ է<sup>5</sup>: Յոյշ ունիմ ամիսէ մը հրապարակ կ'ելլէ արդէն: Առաջին օրինակը անշուշտ ձեզի կը հասցնեմ: Հիմակուընէ ներողութիւն կը խնդրեմ կարճատեսութեանս եւ հաւանական սխալներուս համար: Մէ՛կ բանի կ'ուզեմ միայն որ հաւատաք. խորունկ սէրով եւ նոյնքան խոր անկեղծութեամբ գրած եմ: Մէ՛կ բա՛ռ իսկ չկայ գիրքին մէջ, որուն ետեւ ամբողջ մտածումս եւ զգացումս չգտնէք: Խանդավառութիւնս անկեղծ է, անկեղծ են նա՛եւ վերապահումներա: Անշուշտ, պիտի ուզէի մի՛այն խանդավառ տողեր գրել բայց գիտէ՛ք վարդի եւ փուշի յաւիտենական առածը. մէկը առանց միւսին ո՛չ միայն անկարելի, այլեւ անբնական է:

«Ե՞րբ պիտի նորէն գաս», կը գրէք՝ չարութեամբ կարծես: Կարենայի՝ վաղը կու գայի: Սարոյեանի հերոսին պէս՝ «սիրոս լեռներն է»<sup>6</sup>: Կարօտով կը վերյիշեմ ձեր մէջ, ձեզի հետ անցուցած օրերա, որոնք՝ հակառակ ամէն ինչի՝ երջանկութեան օրեր եղան ինծի համար: Անցեալ, հեռաւոր երջանկութիւն...

Անցեալները Մանուկէլը<sup>7</sup> տեսայ, երկար խօսեցանք ձեր մասին: Հաւանօրէն գա՛րձեալ հանդիպինք: Եթէ կարենամ՝ դիրքիս երկրորդ մասին փորձերը պիտի դրկեմ հետը, որպէսզի հրապարակ ելլելէ առաջ գաղափար մը ունենաք արդէն ամբողջութեան մասին:

*Մինչ այդ՝ վերջաբանիս վերջաբանը.*

«Ժպտելով ալ կ'ապրի մէր գրականութեան մէջ որպէս ինքնուրոյն, մեծ գրող՝ Աճմոնց Գուրգէն, Նիցցայի Պարտիզան. «Առաջին» ու «Վերջին» պոէտ, Սեւ Մարդու կենսադիր, անտա-

<sup>4</sup> Վերապրուկն է Յովհ. Թումանեանի հէքիաթներից չափածոյ տողի:

<sup>5</sup> Խօսքը նորից առաջաբանում յիշուած մենագրութեան մասին է:

<sup>6</sup> Վերապրուկն է Վ. Սարոյեանի «իմ սիրոտ լիոներում է» պիէսի:

<sup>7</sup> Խօսքը բէյրութահայ (ներկայում՝ կանադահայ) բանաստեղծ եւ գրականագէտ Մանուկէլ Քէսէեանի մասին է: Այդ՝ տարիներին նա ուսանում էր Երեւանում եւ Մահարու հետ ունէր մտերիմ յարաբերութիւններ:

նելի Գուրգէն խան, Հայոց գրական դաշտերի անկրկնելի Մահարի»<sup>8</sup>:

**Ամէն:**

Կարօտով, սէրով, ողջոյներով՝ Գ. Շահինեան

Գուրգէն Մահարին – Գրիգոր Շահինեանին,

19 Մարտի 1964 թուականի, Երեւան

Սիրելի Գրիգոր աղա.

Նամակդ այսօր ստացայ: Որքան տանջալի է Համաստեղի նամակները կարդալը, այնքան հաճելի են քո եւ Շահնուրի նամակների ընթերցումը, – մարդարտաշար ձեռագիրներ: Համաստեղի ձեռագիրը կարդալին աւելի պէտք է գուշակել, վերծանել աւելի շուտ... – Այս չի խանգարե՞ր, որ ամէն անգամ սիրով եւ եռանդով լծուիմ այս վերծանման աշխատանքին եւ ստանամ նո՞յն, աւելի հաճելի դժուարութեամբ ձեռք բերուած հաճոյքը...

Արդ, կը գրե՞ս, սիրելիդ իմ Գրիգոր, որ իմ մասին գրած գիրքդ մամուլի տակ է եւ մէկ ամիսէն լոյս պիտի տեսնէ: Մէկ ամիսը երկար ժամանակ չէ, ես տասնեօթ տարի մամուլի տակ եմ եղեր եւ այնուամենայնիւ լոյս եմ տեսներ<sup>9</sup>: Միայն պիտի թելաղքէի, որ գիրքդ առաքէիր ինձի Մոսկովայի հասցէով, որ է՝ Moskva, I-110, prosp. Mira 61, ap. 6 – ինձի<sup>10</sup>:

Շուտով չորս ամսով ընտանիքով Երեւանէն դուրս պիտի գամ ճամբորգութեան եւ «Հանգստանալու»<sup>11</sup>: Հանգստանալը չակերտեցի, որովհետեւ հանգստանալ չգիտեմ: Հանգստանալ կարելի է ա'յն աշխարհում... իսկ այս աշխարհում պէտք է ապրել առանց այն էլ շատ եմ ցաւում, որ օրուայ մէջ մի քանի ժամ ստիպուած եմ քնանալ... տեսա՞ր պարծենկոտիս...

<sup>8</sup> Վերջաբանը կազմուած է Մահարու գործերի խորագրերից եւ խօսքերից:

<sup>9</sup> Ակնարկում է իր բանագատութիւնը 1936-1954 թուականներին:

<sup>10</sup> Այդ տարիներին Մոսկովայում բնակուող ափիւռքահայ բանաստեղծ Աբրահամ Ալիքեանի հասցէն է: Մահարին նրա հետ ունէր մտերիմ յարաբերութիւններ:

<sup>11</sup> Մահարին ամառներն անց էր կացնում Բալթիկ ծովի ափին գտնուող Պալանկա հանգստավայրում՝ միջանկեալ կանդ առնելով Մոսկովայում եւ Վիլնիսում:

Նորէն պիտի հարցնեմ առանց չարութեան, ե՞րբ պիտի դաս: Ասենք չեմ ուզում, որ հիմա գաս, որովհետեւ... աւելի լաւ է աշնա՞նը, երբ ես Երեւանում կը լինեմ:

**Միշտ գեղեցիկ է Երեւանը, իսկ աշնանային Երեւանը գերգեղեցիկ է, ինչպէս գիտես:**

**Խորին չնորհակալութիւն ամսագիրների առաքման համար: Կանոնաւոր կը ստանամ:**

**Եթէ հետաքրքրուում ես գործերիս մասին, արդ պիտի աեղեկացնեմ, որ պատրաստում եմ գործերիս հինգհատորեակը: Երեք հատոր պատրաստ է. չորրորդը՝ լինելու է «Այրուող այդետաններ» վէպս («Ոտնաձայներ այդուց»)<sup>12</sup> քեզ ծանօթ գործի չարունակութիւնը). իմ կարծիքով այս վէպը իմ ամենայաջող գործը պիտի լինի: – Ինչալլա՛հ, – կ'ասէր Համաստեղը: Առանձին գրքոյկով տպուում է «Սեւ մարդը»<sup>13</sup>: Հետաքրքիր հատոր է լինելու վերջին, հինգերորդ հատորը (զանազան, երգիծանք, յօդուածներ եւլն.):**

<sup>12</sup> Այդ գործն իրենից ներկայացնում է 1934 թուականին սկսուած եւ անաւարտ մնացած «Գուրգէն խանի տոհմը» հրապարակումը եւ կազմեց «Այրուող այդետաններ» վէպի առաջին չորս գլուխները:

<sup>13</sup> Մահարու առաջին ճամբարային պատումը՝ Պատմուածքի առանձին հրատարակութիւնն ունէր իր պատութիւնը Այս ընդգրկուած էր տպարան իշեցուած «Հռութեան ձայնը» ժողովածուում, երբ 1962-ի ամառը Մերձբալթիկա հասան անհանդապացնող լուրեր: «Գրքիս շուրջը դէշ աղմուկ կայ, հետաքրքրութ'ր», գրեց նա գրականադէտ Շ. Շահրիկեանին Պարզուեց, որ ժողովածուի հրապարակումը կանգնեցուել է հչնց «Սեւ մարդը» պատմուածքի համար: Նախատեսուել էր անդամ այն հանել ժողովածուից: Մահարին արեց, ինչ կարող էր. «Այսօր մի նամակ ուղարկեցի ընի. Զարոքեանին գրքիս առեւանդման կապակցութեամբ... Բողոքեցի եւ ինսփեցի նրա վճռական միջամտութիւնը» (Հ. Մահարին, 18 յուլիսի 1962թ.): Առաջիկայ օրերին ոչինչ չփոխուեց եւ օգսուոսի 12-ին Մահարին նորից գրեց Շահրիկեանին. «Գրքիս հետ պատահածը (մանհամասնութիւնները քեզնից կը սպասեմ...) խիեց ինձ կայծակի նման կարծեմ անցեալ տարի այս ձեռագրով նամակ չեմ գրել քեզ: Գրի՞չն է դողում, ո՛չ մատներս են գողում. վիրաւորուեցի գրքիս հետ, գրքիս պէս...»:

Մական Հարաստանի կոմկուսի զեկավարին ուղղուած դիմումն անհետեւանք չմնաց: Գիրքը ոչ միայն լրաց տեսաւ նախատեսուած պատմուածքով, այնեւ արժանացաւ տարուայ լաւագոյն պատմուածքի մրցանակին եւ ունեցաւ առանձին հրապարակում:

<sup>14</sup> Նիւթերի առատաթեան պատճառով Երկերի հինգերորդ հատորում ընդգրրկուեցին գեղարուեստական գործերու ի լրումն Երկերի՝ 2004 թուականին

Գրական հունձքը այս տարի հարուստ է. լոյս են տեսնելու Շիրազի, Վ. Դաւթեանի, Հ. Սահեանի, Հր. Յովհաննիսեանի բանաստեղծական նոր գրքերը, այլ եւ Սիլուայի արձակը, – սփիւռքեան տպաւորութիւնները<sup>15</sup>: ինչպէս տեսնում ես, ուրախալի շատ բան կայ:

Իսկ հիմա՝ բարի գիշեր: Ժամի 2-ն է: Խաղաղ, գարնանային, երեւանեան դիշեր: Մինչեւ առաւօտ պիտի մեռնեմ, առաւօտեան յարութիւն առնեմ... Ո՞վ հնարեց այս քնելը...

Մեծ սիրով՝ Գ. Մահարի

Գրիգոր Շահինեանը – Գուրգէն Մահարուն,

7 Մայիսի 1964 թուականի, Պէյրութ

Սիրելի Գուրգէն իսան.

Շաբաթ մը առաջ զրկեցի գիրքս, մե՛ր գիրքը, Աբրահամի հասցէին: Կ'ենթադրեմ այս նամակի հասնելէն մէկ-երկու շաբաթ վերջը ձեռքերնիդ անցած կ'ըլլայ:

Սիրուն գիրք եղաւ, գեղեցիկ կողքով. ճերմակ, փառաւոր թուղթով, մաքուր տպագրութեամբ: Հարց է ի՞նչ չափով բովանդակութիւնը կը համապատասխանէ արտաքինին: Եւ այս մասին, ո՞րեւէ մէկի աւելի ձե՛ր կարծիքը կարեւոր է:

Սիշտ բարեացակամ չեմ եղած ձեր գործին հանդէպ. պէտք եղած տեղը (գոնէ ի՞մ կարծիքով՝ պէտք եղած) քննադատութեան խօսք ըսած եմ կամ վերապահութիւն յայտնած: Բայց ոչ իսկ մէկ վայրկեան սէրս պակսած է ձեր ստեղծագործութեան ամբողջութեան, մանաւանդ ինձի արժէքաւոր թուող մասերուն հանդէպ:

Ուրիշ առիթով ըսած եմ, կը կրկնեմ: Ո՛չ յաւակնոտ եմ, ո՛չ ալ փառատէր: Մէկու մը մասին երբ կը գրեմ՝ ներքին պահանջի մը գոհացում տալու կը ձգտիմ միայն եւ չեմ մտածեր թէ կարեւոր բաներ կ'ըսեմ: Մէ՛կ արժանիք միայն կատաղօրէն

լոյս տեսաւ Մահարու «Երգիծանք եւ հումոր» ժողովածուն Յօդուածները, գրախօսականները եւ ակնարկները կազմուած են, ծանօթագրուած եւ նոյնպէս սպասում են իրենց ժամին:

<sup>15</sup> Խօսքը Ս. Կապուտիկեանի «Քարաւանները դեռ քայլում են» (1964) գրքի մասին է:

իմս կը նկատեմ. անկեղծութիւնը, բացարձակ, անկաշառ անկեղծութիւնը: Կ'ենթադրեմ ուրիշ առաւելութիւն մըն ալ ունիմ, որուն մասին կէս-կատակ կէս-շխտակ խօսած ենք Երեւանի մէջ. բարութիւնը: Ուսումնասիրութեանս առարկայ հեղինակին հանդէպ մի՞այն լաւ զգացումներ կը սնուցանեմ եւ ի'սկապէս կը ցաւիմ, բառի դրեթէ Փիզիքական խմաստով, երբ կը տարուիմ նաեւ բացասական կարծիք ձեւակերպելու:

Այս բոլորի պատճառով ալ՝ համեստօրէն պիտի ուրախանամ, եթէ մարդիկ արժէք մը տեսնեն դիրքիս մէջ, մանաւանդ դո՛ւք, գնահատէք զայն: Բայց միայն ա՛յդքամ: Զեր դործը պէտք է օր մը գտնէ իր արժանաւոր մեկնաբանը. իմ տուածս սէրի եւ յարգանքի տուրք մըն է: Եւ իբր այդ՝ աւելին սպասելու իրաւունք չունիմ անկէ:

Ուրիշ կարեւոր բան մըն ալ ըսեմ ձեզի: Այս դիրքը անկախաբար իր արժէքէն սիրելի է ինծի նա՛եւ ուրիշ պատճառով մը: Անցած ամառ, երբ անոր շարադրութեամբ զբաղած էի, կը գտնուէի հոգեկան անկրելի տագնապի մը մէջ: Կորանցուցած էի կեանքս իմաստաւորող կուռան մը եւ ա՛լ հաճոյք չէի ստանար կեանքէն: Այս դործը այդ օրերուն լեցուց հոգիիս պարապը, փոխարինեց փլած իմաստը կեանքիս, դարձաւ պայքարի նոր միջոց ու նպատակ: Ու ես, որ կրկնակի amatleur<sup>16</sup> մըն էի առաջ, անցած ամառ աւելի ամուր կապուեցայ գրականութեան ու գրադասութեան: «Պարապ վախտի խաղալիք»ը<sup>17</sup> դարձաւ իսկական կոչում, անտեղիտալի պահանչ:

Կը տեսնէ՞ք ինչե՞ր կը պարտիմ ձեզի, ճիշտ է՝ անուղղակիօրէն: Ճիմա չէք զարմանար որ ձեզի զրկած օրինակը մակադրած ըլլամ «Զքոյդ եւ քոյոց քեզ մատուցանեմ»: Այդպէս է կրկնապէս:

Այսպէս բաներ, սիրելի՛ Գուրգէն խան:

**Անկեղծ սէրով՝ Գրիգոր Շահինեսն**

<sup>16</sup> Միրով, ոչ մասնագէտ (Փրանս.):

<sup>17</sup> Վերապրուկն է Խ. Աբովեանի յախոնի ստեղծագործութեան:

**Գուրգին Մահարին – Գրիգոր Շահինեանին,  
9 Յուլիսի 1964 թուականի, Պալանկա**

**Շատ սիրելի Գրիգոր աղա!**

Ալիքեանի Հասցէով ուղարկած գիրքը եկաւ ինձ գտաւ Բալթիկ ծովի ափերին, ուր ահա գտնւում եմ իբր երկու ամիս հանդըստանալու, անհանգստանալու, աշխատելու եւ չաշխատելու համար...

Գիրքը գրել ես սիրով եւ սրտով. փորձով գիտեմ, որ այն, ինչ դրում է սիրով եւ սրտով, չի կարող ձախողել: Շատ էջերի վրայ ինձ գտայ եւ ճանաչեցի, անկախ այն հանգամանքից թէ քննադատակա՞ն էջեր էին, թէ՝ գնահատական...

Որքան բախտաւոր եմ որպէս արձակագիր, ճիշտ այդքան եւ գուցէ մի քիչ աւելի դժբախտ եմ, որպէս բանաստեղծ. իմ քննադատները, քեզ հետ, վայլուն խօսքեր եւ դրուատումներ չեն ինայիլ ինձ: Բայց ես շարունակում եմ մնալ այն համոզման, որ իմ բանաստեղծութիւնը դեռ չի գտել իր քննադատողին եւ գնահատողին<sup>18</sup>...


Այլպէս չէ արձակը: Յատկապէս գու, սիրելի Գրիգոր, շատ փակ դռներ ես բաց արել իմ արձակի մասին խօսելիս, անգամ ինձ համար անակնկալ դռներ: Շնորհակալութիւն այդ մեծ վայելքի համար: Շնորհակալութիւն:

Ինձ առանձնապէս եւ յատկապէս ուրախութիւն պատճառեց այն փաստը, որ դու ճանաչել ու գնահատել ես «Ոտնաձայները»:

18

Իր սույգիայի թերագնահատման մասին Մահարին գրել է Շ. Շահնուրին. «Եթէ ես արձակ չունենայի, այո, իմ չափածոն պիտի գնահատուէր ըստ արժանայն, բայց իմ արձակը... իմաստ լեզուով ասած՝ իմ արձակը եղաւ բանաստեղծութեանս գերեզմանափորը»: Սակայն բացի ստեղծագործական բազմաժամութիւնից, կար թերագնահատման այլ պատճառ եւս: Անվիճելի է, որ ոչ մի բանաստեղծ չի գրում հաւասար ուժի բանաստեղծութիւններ: Մահարու բանաստեղծական ժողովածուները կամ վերաբերել են նրա ստեղծագործական առանձին շրջաններին, կամ ամփոփել են տուեալ պահի համար նախկին ողջ վաստակը: Հրապարակի վրայ չկար այն հատրնտիրը, որը կ'ուտանձնացնէր մնայուն գործերը եւ յաւուր պատշաճի կը ներկայացնէր գրանք ընթերցողին: Միայն 2004 թուականին լրացուեց այդ բացը, երբ գրախանութներում յայտնուեց «Անանձնական» ժողովածուն:

82 - 2006



Այդ «Ուտնաձայներ»ն սկիզբն են իմ «Այրուող այգեստաններ»ը ծաւալուն վէպի, որի վերջին գլուխներն եմ հիմա գրում: Յոյս ունեմ, որ գալ տարի պիտի տպուի վէպը եւ այն ժամանակի... (թո՛ղ յոխորտամ) այս վէպն այնպիսի ստուեր պիտի նետի իմ ամբողջ գրականութեան վրայ, ինչպէս իմ արձակը... բանաստեղծութեանս վրայ... նաևը<sup>19</sup> լ...

Ոչ միայն ինձ, բոլոր կարդացողների վրայ գիրքը թողել է շատ լաւ եւ փայլուն տպաւորութիւն: Այս են վկայում Հայաստանից ինձ հասած արձագանքները: «Գրական թերթ»ը պիտի գրի գրքիդ մասին: Այսօր մի նամակ ստացայ գրականագէտ Վարագ Առաքելեանից, որին ես խօսքով անուանում եմ Վայրադ Առաքելեան<sup>19</sup>: ահա թէ ինչ է դրում նա:-

«...Շտապում եմ քեզ ուրախացնել: Գրադարանում պատահամամբ ձեռքս ընկաւ Գրիգոր Շահինեանի մի գեղեցիկ գիրքը նույիրուած ձերդ մեծութեան (այս Վայրագն ինձի Վազգէն Ա-ի հետ կը շփոթէ... - Գ. Մ.) ստեղծագործութեան քննութեանը եւ 60-ամեակին: Ինչոր կարդացի, վեր է ամէն զովասանքից: Անպիտանը (անպիտանն ինքն է... - Գ. Մ.) այնպէս է հասկացել քեզ եւ այնպէս է վերլուծել, որ ինքդ քեզ այդպէս լաւ չես ճանաչի երեւի, խակ վերլուծել ի հարկէ չես կարող (կեցցե՞ս, Վայրագ... - Գ. Մ.): Գրական գործունէութիւնդ բաժանել է հինգ շրջանների: Կարեւորն այն է, որ ամէն տող դրուած է սիրով եւ սրտի թըթուումով եւ մանաւանդ շատ խելօք մարդու դատումներով: Ռւղղակի նախանձելի է գրում շանորդին (ինքն է... - Գ. Մ.), կարծես ստեղծուած է գեղարուեստական երկ վերլուծելու համար եւ ոչ թէ մերոնց նման: Գրականագէտ են, քննադատ են եւ չգիտեմ էլ ինչ են, բայց երկ ու բանաստեղծութիւնն վերլուծել, բնութագրութիւններ տալ չեն կարողանում, կամ աւելի ճիշտը չգիտեն: Ցուսով եմ, որ այս մասին սուաջինը ես եմ քեզ ուրախացնում...» եւեն.:

Նամակ առի նոյնպէս Համաստեղէն. իր գեղեցիկ եւ մարդարտաշար (<sup>19</sup>) նամակով, ձեռադրով՝ ինձ կ'ուրախացնէ: Այս մարդիկ կարծում են, որ ես աշխարհից դուրս մարդ եմ: Վանեցինե-

<sup>19</sup> Առաքելեան Վարագ (1910-2003), լեզուաբան եւ բանասէր: Յայտնի է նրա մերժուական վերաբերմունքը «Այրուող արքեստաններ»ի նկատմամբ «հայրենասիրական» գիրքներից, որի համար Մահարու նամակներում ստացել է նաև Վարագ անունը.

րի ասածին պէս՝ «ժամից ես եմ գալիս, ”տէր ողորմեա” նրանք են ասում»:

«Բաղին»ին չնորհակալութիւն «Գիշեր»ս լուսաւորելու համար: Շնորհակալութիւն գոկտորին, իր բարձր գնահատութեան համար: Ֆոլքնը, Հէմինդուէյ՝ ոչ, բայց Գուրգէն Մահարի մը ըլլալ հաստատապէս որոշեր եմ<sup>20</sup>:

Նամակիս պատասխանէ Աբրահամի հասցէով. Վիլոն պիտի անցնեմ, Մոսկուա պիտի քաշ գամ (հետո ըլլայիր...) Օգոստոսի 20-ին Երեւան լինելու համար:

Ձերմ սիրով քո՝

Գուրգէն Մահարի

Գրիգոր Շահինեանը – Գուրգէն Մահարուն,  
31 Օգոստոսի 1964 թուականի

Սիրելի Գուրգէն խան.

Ձեր վերջին նամակը խոր հաճոյք, իսկական գեղարուեստական վայելք տուաւ ինծի: Կենդանի էր, սրամիտ, հիւթեղ՝ ձեր գրականութեան պէս, իմ թերագնահատած քերթողութեան եւ շատ սիրած արձակին նման...: Հազար չնորհակալութիւն:

Շնորհակալութիւն նաեւ իմ գրածիս վերաբերող եւ ինքնասսիրութիւնս չոյող հատուածներուն համար: Անշուշտ անձնա-

<sup>20</sup> 1964թ. լոյս տեսաւ Մահարու «Գիշերը» պատմուածքը («Գրական թերթ», թիւ 16), ինչի առիթով «գոկտորը», «Բագինի» աշխատակից, թատերագէտ եւ գրականագէտ Բաբրէն Փափակեանը (1915-1990) անձնական նամակում գլութէց. «Առիթ ունեցայ կարդարու Գ. Մահարիի «Գիշերը» «Գրական թերթի» այսուեղ հասած վերջին թիւին մէջ. Գրուխործոց մը զոր ըլբոցինեցի: Կրնամ ըսել, որ առաջին անգամն է կը հանդիպիմ իր քով եւ անշուշտ զինք շրջապատող հեղինակներուն մէջ միջազգային առումով գրական, արուեստի էջերու. ամբողջ գրուածքը, տող առ տող, պատկեր առ պատկեր, ապրում առ ապրում իրաւ գրականութիւն մըն է. հայկական Ֆոլքնը մը, Հէմինդուէյ մը կ'ըլլար Մահարին, եթէ այդ ձեւով, այդ հարազատութեամբ վիզ մը կերտէր, անշուշտ այդ իրաւութեամբ եւ ազատութեամբ Յամենայն դէպս այդ էջերը կը մնան ինձի համար գլուխ-գործոց էջեր»: Ամսագիրը նոյն տարուայ թիւ 6-ում արտասպեց պատմուածքը:

կան արժանիքներս անգիտանալու չափ համեստ չեմ ես, բայց անկեղծօրէն, նուազ շռայլ իմ գնահատանքիս մէջ կան Վարադ Առաքելեանները: Եւ սուտ խօսած կ'ըլլամ, եթէ ըսեմ որ նոյնիսկ չափազանցուած գովեստները հաճոյք չեն պատճառեր ինծի: Մարդ եմ, ի վերջոյ, այսինքն շոյանքը սիրող կենդանիր...: Մէկ բան կայ, սակայն, որ արդար ուրախութիւն կը պատճառէ ինծի: ձեր գնահատութիւնը: Ի վերջոյ հեղինակը ի՞նքն է ամէնէն իրագեկ դատաւորը իր մասին գրուած լաւին ու վատին: Անշուշտ, պիտի ուզէի որ նա'եւ ձեր քերթողութեան մասին ձեր համամտութիւնը վայելող դատում կատարած ըլլայի, առանց համոզումներուս եւ զգալու կերպիս դաւաճանիլու: Զէ սոսցուած, ինչպէս սովորութիւն ունիք ըսելու հայրենիքի մէջ: Պատճառը զոյդէ, գրած էի արդէն Աբրահամին: Նաի՞ ես պէտք է աւելի լաւ ճանչնայի ձեր բանաստեղծութեան բնական մթնոլորտը, այսինքն ընկերային եւ անհատական պայմանները, որոնց մէջ «քերթած» էք. եւ յետոյ՝ զգալու տարբեր կերպ ու չափ ունենայի: Իմ կը թութիւնս Փրանսական է եւ առհասարակ արեւմտեան: Իսկ արեւմտեան կողմն աշխարհի՝ հսկայ յեղաշրջում տեղի ունեցած է քերթողութեան կալուածին մէջ. իմ ճաշակս եւ ըմբռնումներս կը թուած են այդ յեղաշրջումի լոյսին տակ:

Ներկայիս կ'աշխատիմ նոր մենագրութեան վրայ՝ նուիրուած լեւոն Շանթին: Պատրաստական աշխատանքը բաւական առաջացած է, բայց չպիտի կարենամ այս ամառ աւարտել ամէն ինչ: Երկու շաբաթէն պիտի մեկնիմ Պարսկաստան, ուր հրաւիրուած եմ երկու դասախոսութիւն տալու գրական նիւթերու շուրջ: Կրնայ պատահիլ որ անտնցմէ մէկը վերաբերի ձեզի շատ ծանօթ եւ ինծի շատ սիրելի խանական ստեղծագործութեան մը...

Պարսկաստանէն վերադարձիս պիտի միրճուիմ դպրոցական գործերուս մէջ: Ուրախ պիտի ըլլամ եթէ շաբաթը քանի մը ժամ կարենամ յատկացնել գրական աշխատանքի, այսինքն ամառուան մէկ օրուան աշխատանքը եթէ կարենամ մէկ շաբաթէն իրադործէն: Եւ ըսել որ երջանիկ մահկանացուներ կան, որոնք ամբողջ ցերեկը գրականութեան յատկացնելէ վերջ՝ քունի տրամադրուած ժամանակէ երկարութենէն կը գանգատին...

Այսքանը՝ իմ ու ձեր մասին միաժամանակ: Իսկ առանձնապէս ձեզի վերաբերող ի՞նչ նորութիւն: Ե՞րբ պիտի կարդանք «Ոտնաձայներ»ու շարունակութիւնը: Քսան Օգոստոսին Երեւան պի-

տի ըլլայիք. նոր ծրագիրներ ունի՞ք, թէ՞ միեւնոյն գործին վրայ կ'աշխատիք եւ երկերու հրատարակութեամբ կը զբաղիք:

Սրատին բարեւներս փոխանցեցէք ձեզի եւ ինծի սիրելի մարդերուն եւ իմ կողմէս չնորհակալութիւն յայտնեցէք ձեր Վայրագին, իր ա'յնքան համակրելի դատումին համար: Կը ցաւիմ որ հոն եղած ատենս չծանօթացայ իրեն, թէեւ փափագեցայ եւ փորձեցի: իրեն մօտ մարդիկ, որ ինծի ալ մօտեցած էին, փորձեցին հանդիպում մը կազմակերպել, բայց չյաջողեցան: Երեւան չէր այդ օրերուն:

Ցարդանքներս տիկինին եւ հպատակէ բարեւներս ձեր խանութեան:

Շատ սիրով՝ Գրիգոր Շահինեան

Գուրգչն Մահարին – Գրիգոր Շահինեանին,  
24 Դեկտեմբերի 1967 թուականի, Երեւան

**Սիրելի Գրիգոր աղա!**

Կարծում էի, որ զիս մոռցեր ես<sup>21</sup>: Ամանորեան քարթդ<sup>22</sup> եկաւ հերքելու համար ամբարիշտ մտքերս: Շնորհակալութիւն: Շնորհակալութիւն:

Պարբերականիդ<sup>23</sup> մասին միայն լսեր եմ եւ կարգացեր, իրեն չեմ տեսեր, ինչպէս չեմ տեսեր Հոլիվուդի աստղերին:

Այս տարի այնքան զբաղուած եմ, որ ահա չորս ամիս է, ինչ կը մտածեմ Մշակութի կոմիտէ երթալ, ընթերցարանը մըտնել եւ տեսնել ի՞նչ կայչկայ... – չեմ կարող: Կը կարծէի, թէ որ-քան ծերանամ, այնքան պիտի թեթեւանամ, – ճի՛շտ հակառակը...

<sup>21</sup> Գր. Շահինեանի վերջին նամակից յետոյ Մահարին ուղարկել էր նրան «Այրուող այգեստաններ» վէսպը եւ սպասում էր գրականագէտի արձագանքին:

<sup>22</sup> Գր. Շահինեանն ուղարկել էր իր աղջկայ լուսանկարով ֆրանսալեզու մի քարտ, հետեւեալ բովանդակութեամբ. «Սիրելի Գուրգչն խանին, մեր Շաղիկը, որ ֆրանսերէն մաղթանքը ներկայացնելու դալաթը ըրեր է կը ցանկանայ վերանորոգ կենդանութիւն եւ ծրագիրներու յաջողութիւնն ես ալ, տրուալ ծառայ Շաղիկի եւ բոլոր Շաղիկներուն կը մաղթեմ գործոց բարեաց յաշողութիւնն եւ «Ահեկան»ի ընկալում՝ մարդակարի մարդուն ձեռքով, փուլտերու միջամտութենչն ձերբազատ Ամէն»:

<sup>23</sup> Խօսքը 1966 թուականից Բէյրութում լրյա տեսնող «Ահեկան» եռամսեայ պարբերականի մասին է, որի խմբագիրն էր Գ. Շահինեանը:

Գրէ, սիրով կը պատասխանեմ. եւ մի ինդիր. եթէ իմ մասին գրած դրքէդ մի օրինակ ունես, զրկէ. Վէպս քեզի զրկեր եմ իմ մակագրութեամբ եւ Մշակութային կոմիտէի փօստով: Ստաց՞՞ր ես: Գրէ, ի՞նչ կ'ուզես զրկեմ: Ինչո՞ւ չերեւացիր այս տարի: Իսկ գալ տարի՞...

**Ամանորեան փոխադարձ ջերմ ողջոյններով՝**

քո՝ Գ. Մահարի

**Գրիգոր Շահինեանը – Գուրգէն Մահարուն,**

**31 Յունուարի 1968 թուականի, Պէլլութ**

**Սիրելի Գուրգէն խան.**

Հաճոյքով ստացայ ձեր վերջին հեռագրանման նամակը: Այդ ալ բան մըն է, տարիներու լրութենէն ետք: Ըսէնք զարմանալու շատ բան չկայ. «Լուսնեան ձայն»ի<sup>24</sup> հեղինակն էք ի վերջոյ...

Գիրքս («Մահարի»ս պիտի ըսէի...) զրկած եմ արդէն: Հասած ըլլալու է մինչեւ հիմա: Զէի գիտեր որո՞ւ համար է՝ չմակագրեցի: Անշուշտ ձեր գիրքը ստացած եմ ժամանակին: Երդում չեմ ըներ անշուշտ, բայց կը կարծեմ որ անիէ վերջ ձեզի գրեցի եւ ըսի ստացած ըլլալս: Վերապահութիւններ ունիմ, բայց հետաքրքրական կը գտնեմ: Իսկ առաջին մասը ուղղակի հիմանալի է: Կ'երագեմ օրին մէկը ուսումնասիրութիւն մը գրել, որուն մէկ մասը վերաբերի «Այգեստաններ»ուն: Զարենցի «Երկիր Նայիրի»ն, Բակունցի «Կեորէս»ը եւ «Այրուող այգեստաններ»ը՝ իրենք իրենց մէջ եւ իրարու հետ համեմատած ուսումնասիրուած: Տեսնենք: Ժամանակ պէտք է եւ աղբեւը: Երկուքն ալ հիմակուհիմա կը պակսին ինծի:

Անշուշտ հոյակապ կ'ըլլար ամառ մը գայի գալքեալ եւ հոն աշխատէի: Միասին ալ կը զրուցէինք երկարօրէն: Գիտեմ որ Զարենցը եւ Բակունցը շատ մօտ եղած են եւ կը մնան ձեզի: Ես նոյնիսկ կը մտածեմ, որ Բակունցին եւ ձեր նման գիրքեր գրելու որոշումը պատահական չէ. «Երկիր Նայիրի»ն պէտք է դրդիչի դեր խաղացած ըլլայ. Հաւանական է նաև որ իրարու հետ խորհրդակցած ըլլաք՝ գրելու սկսելէ առաջ:

«Գրէ, կ'ըսէք, ի՞նչ կ'ուզես, զրկեմ»: Իմ ուզածս դժուար կը գտնուի, բայց եթէ յանկարծ պատահեցաւ գտաք՝ զրկեցէք, չնոր-

<sup>24</sup> Այդպէս էր կոչում Մահարու արձակ գործերի ժողովածուն (1962):

հակալ կ'ըլլամ: Սովետահայ գրականութեան երկհատոր պատմութիւն մը կայ, որուն խմբադիրներէն մէկը Սուրէն Աղաբեաբեաննէ: Բ հատորը ունիմ, առաջինը չունիմ: Եւ գիտեմ որ հրապարակի վրայ չկայ: Հիմա, Գուրգէն խանեան չնորհով մը եթէ ձեռք ձգէք՝ լաւ. այլապէս՝ մոռցէք:

Հայկագեան գոլէճէն կը գրեմ: Տղոց գրաւոր հարցաքննութեան նիւթ տուած եմ (Բակունց, Օշական եւն.), ես ալ առիթէն կ'օգտուիմ ձեզի հետ զրուցելու համար:

Ես գալու կու գամ օր մը: Դո՞ւք երբ պիտի գաք Լիբանան:

Զերմ բարեւներ ձեզի եւ բոլոր ծանօթներուն, յատկապէս Պարոյրին: Շան պէս կարօտցած եմ ձեզ եւ Երեւանը: Լաւ կ'ըլլար, գայի, երեքով դարձեալ Արագիլ՝ երթայլնք, խմէինք ու խօսէինք<sup>25</sup> ...

Անկեղծ սիրով՝ Գրիգոր Շահինեան

Գուրգէն Մահարին – Գրիգոր Շահինեանին,

8 Մարտի 1968 թուականի, Երեւան

**Շատ սիրելի նրիգոր աղա!**

Նամակիոր պատասխանը ուշացուցի: Վերջերս ինձ հետ պատահեց ծանր դժբախտութիւն: Մահացաւ ինձմէ փոքր եղբայրս, Խորհինը<sup>26</sup>: Կամաց-կամաց ինձ գտնում եմ եւ առաջին գործս է պատասխանի անպատճիւան մնացած նամակներին եւ առաջին հերթին քեզ («ձեր»ը չեմ սիրեր, դու էլ թող այդ «ձեր»ն ու «գուք»ը...), շնորհակալութիւն յայտնելու նախ եւ առաջ մենագրութեանդ համար, զոր ստացայ ժամանակին եւ նամակիոր համար, ուր կը խընդրես դտնի քեզ համար «Խորհրդ՝ գրականութեան» առաջին համար սիրելի քեզ համար!

25 Նկատի ունի Երեւանի «Արագիլ» սրճարանը:

26 Դժուար թէ իրականանար այդ ցանկութիւնը. Պ. Սեւակը թշնամացել էր Մարուն՝ նրս «Մնացուն յաղթանակներ եւ ժամանակաւոր պարուտթիւններ» գրախօսականի համար («Գրական թերթ», 1964, թիւ 4): Զնայած դրան, վերջինս պահպանեց աւագին, մեծին բնորոշ բարեացակամ վերաբերմունքը դէպի Սեւակը Մահարի-Սեւակ գրական կապերի մասին տես «Այրուող այդ գիտառների» գիտական հրատարակութիւնը (Երեւան, 2004).

27 Խորէն Աճէմեան (1905-1968), 20-ական թուականներին յայտնի բանաստեղծ: Հետագայում տեղափոխութեց Մոսկուս և զբաղուեց, առանց որեւէ յաջողութեան, ազգային խնդիրների վերաբերեալ ոչ պատուիրուած թեմաների ուսումնակրութեամբ:

մարը, որու համար դիմեցի իրեն իսկ՝ Ս. Աղաբարեանին, որը եւ խոստացաւ աշխատել «բան մը ընել», քանզի սպառսպուռ եղած են բոլոր օրինակները եւ կը մնայ «մէկէ մը թոցնել», ըստ որում... ամէն պարագային... մինչեւ անգամ...

Այս երկար եւ բաւականաչափ տափակ նախադասութիւնը դեռ կարող էի քաշել մինչեւ էջի վերջը, բայց կարծեմ այսքանն ալ բաւ է, որ զիս չմեղադրես «հեռագրանման նամակ» գրելու մեղքի մէջ... տատիս ասածի պէս՝ «մեղքը մեղաւորէն պակաս չէ...»:

Լաւ, որ չես երդուեր, որովհետեւ «Այգեստաններ»ուս ստանալուդ մասին «թանագուլ» չըրիր գրելու եւ ես կը խորհէի, որ չես ստացեր: Օրերս կ'ուղարկեմ «Զարենց-նամէ» գրքոյիկ՝ յուշել Զարենցէ, ուր կը գտնես յաւելումներ ու նոր էջեր՝ Յաւելումներով ու նոր էջեր՝ Յաւելումներով կը ստանաս նաեւ «Այգեստաններ»ուս նոր, հատորային հրատարակութիւնը, զորս յանձնեցի օրերու՝<sup>28</sup>

Քո դիտողութիւնը «Երկիր Նայիրի», «Կեորէս» եւ «Այրուող այգեստաններ» գործերու մասին ճիշտ է, միայն թէ այս գործին մէջ չի եղել քո նշած «իրար հետ խորհրդակցած» լի-

<sup>28</sup> Զարենցին նույիրուած յուշերը ամասագրային հրապարակումից յետոյ լրս տեսան առանձին գրքով՝ յաւելումներով:

<sup>29</sup> Գրողների միութեան ղեկավարութիւնը «Այրուող այգեստաններ»ի շուրջը հրանքեց «համաժողովրդական» այնպիսի աղմուկ, որ Մահարին շփոթուեց եւ, ցաւօք, աւելացրեց նոր գլուխներ Վանի հերոսամարտի մասին, որոնք, որքան էլ գրուած նոյն ձեռքով, չին «կազչում» վէպի ողբերգական ատաղձին վէպի երկրորդ հրատարակութիւնն իրականացրուեց գրողի մահից տասը տարի յետոյ՝ 1979 թուականին, իրականացրուեց այնպիսի խեղաթիւրումներով, որ Երկերի չորրորդ հատորը պէտք է յայտարարել գրականութիւնից եւ Մահարու դրական ժառանգութիւնից գուրա Ողջ պատասխանատուութիւնը գրական այդ վանդալիզմի համար ընկնում է հրատարակչութեան այդ տարիների գեղարուեստական բաժնի վարիչ Ստ. Թոփչեանի վրայի իր հերթին առաջին հրատարակութիւնն էլ «փմբագրուել» էր երեք ձեռքով (Հայր-թոփչեան, այնուհետեւ՝ Պայազատ եւ Դաքէսեն): Միայն 2004 թուականին լրս տեսաւ վէպի գիտական հրատարակութիւնը՝ բնագրի հետ համեմատութիւններով, նախկին հրատարակութիւնների մեկնութիւններով եւ ծանօթագրութիւններով:

Որոշ «գրականագէտներ» առաջ են քաշում այս միտքը, որ վէպի վերջնական տարբերակը «ըստ հեղինակի կամօք» վերջինն է, փաստօրէն՝ ստիպողականը: Նրանք «մոռանում» են այն պայմանները, որոնցում ապրում եւ ստեղծագործում էր Մահարին...

նելու պարագան, իսկ եթէ եղել է խորհուրդակիցութիւն ապա այդ՝ եղել է լուռ ու տարերայնօրէն:

Բակունցի մասին յուշերս նոյնակս պիտի ընդարձակեմ, առանձին գրքոյիկով հրատարակելու համար: Իսկ հիմա նստած եմ (կամ պիտի նստեմ... նախաբանը միայն գրած եմ...) «Երիտասարդութիւն» չորրորդութեան վրայ՝, որն աւելի բարդ է, այլ եւ հարուստ, քան «Մանկութիւն», «Պատմանեկութիւն» եւ «Երիտասարդութեան, սեմին» գործերը, առանձին-առանձին եւ միասին վերցուցած... ընդգրկում է 1920-1936-ի Օգոստոսի 10-ը, գեշերուայ ժամը 3-ը... Անելու շատ բան կայ, իսկ ժամանակ... քիչ է մնացեր...

Ուրիշ ի՞նչ գրեմ, հա՛, Շահնուրը իր վերջին նամակի մէջ կը գրէ.— «Գ. Շահինեան, ուսուցիչ եւ գրականագէտ Բէյրութէն, որ մենագրութիւն մը նուիրած է քու գրական վաստակին, իմաստալից եւ մեծապէս համակրական էջ մը յատկացուցեր է իմ Տետրակներուն, ԱՀեկան 67-ի մէջ<sup>32</sup>, որուն խմբագիրն է»:

### Հաճելի վկայութիւն:

Իսկ ես տաքի ու պաղի մէջ եմ. ոմանք վէպս երկինք կը հանեն<sup>33</sup>, ուրիշները կը ոտնահարեն: Ես ալ հիւանդ ըլլալ կը թուիմ «Հոգեւոր հարբուխով»<sup>34</sup>:

<sup>30</sup> Մահարին դէմ էր իր վէպի եւ Զարենցի ու Բակունցի վէպէրի միջեւ գուգակներին. «Զեմ ժխտում, որպէս գրական գործ նա կը կանգնի միայն եւ միայն «Երկիր Նայիրու» եւ Ալսել Բակունցի «Կեորչսի» կողքին, բայց այս միայն եւ միայն գրական մշակոյթի, արժակի, նորագոյն մեր արձակի զարգացման աստիճանի առումով եւ ոչ թէ ոգու կամ «ոգու...» (Խ. Աճեմեանին, 5 մարտի 1965թ.).

<sup>31</sup> Նկատի ունի իր ինքնակենասագրական եռագրութեան շարունակութիւնը կազմող «Երտասարդութիւն» վէպը, որը մնաց անաւարտ: «Ալյուող այգեստաններ»ի հրդեհում ալլուեցին Մահարու կեանքի վերջին տարիները, «Երիտասարդութիւն» եւ «Քաջ Նապար» վէպէրը (մէկից գրուած է 78 էջ, իսկ միւսից՝ առաջաբանը...)

<sup>32</sup> Խօսքը Գ. Շահինեանի «Ռւրախալի վերաբարձ» գրախօսականի մասին է՝ Շահնուրի «Զոյդ մը կարմիր տետրակներ» գրութիւնների մասին («Ահեկան», 1967, թիւ 3):

<sup>33</sup> Մահարու հետ ազգակցական կապ չունեցող Գէորգ Աճեմեանը «Ազատութիւնը որպէս բռնութիւն» յօդուածում գրեց. «Մահարիի վէպը Վանի եւ անոր կորուստին մասին է: Բայց Վանը, կամ Վասպուրականը ամբողջութեամբ, առանձին երեւոյթ մը կամ պարագայ մը չէ, այլ օրինակ մը, որ իր մէջ կը խտացնէ ամբողջութիւնը: Հարստապանը՝ Մասնաւորով ընդհանուրը,

**Երեւանում գարուն է: Գայլի՛ր այս անուշ գարունը միասին վայելէինք...**

**Քո՝ Գուրգին Մահարի**

ամբողջականը տալու դասականացած, իրագործուած ու յագեցած վէպ մըն է: Եւ յաջողած այդ կերպով Յաջողած է այն չափով, որ կարելի է զայն դասել Տուլիթոյի «Պատերազմ» եւ խաղաղութիւն» կամ Բարթերնաքի «Տոքթոր Ժիւակոյի» կարգին նոյն տարրողութեամբ, նոյն մտահոգութեամբ գլուրուած ու նորնքան մը յաջողած վէպ է: Փաստ որ կըցած է տալ ամբողջ պատմական ժամանակաշրջան մը:

Ինչո՞ւ Բասթերնաք պիտի կարենայ դրել «Տոքթոր Ժիւակոյի» նման ռուսական յեղափոխութեան արդիւնքները քննադատող վէպ մը եւ պիտի արժանանայ զինք ծնող ժողովորդի հացառմին եւ երախտագիտութեան, իսկ մենք նոյն գացառմները պիտի զվանանք Գուրգին Մահարիին, Մինչ Բասթերնաք կ'արժանանայ նոսէլեան մրցանակին, մենք կը վարկաբեկինք Մահարին նոյնանման վէպի մը առիթով՝ անտեսելով դիրքին գրական արժեքը, կարեւորութիւնը, տարրողութիւնն ու առաջելութիւնը:

Այս կերպո՞վ պիտի գնահատենք մեր արժեքները եւ առաջադիմենք:

Այս է միթէ ազգային արժանապատութիւնն կոչուածը» («Սփիւռք», Բէյրութ, 1967, թիւ 35):

Մահարու արձագանքն այս յօդուածին չափաւոր էր. «Ի հարկէ, չափազանցութիւն է իմ վէպը զնել Տուլիթոյի «Պատերազմ» եւ խաղաղութիւն» վէպի կողքին ինչպէս արել է «Սփիւռք» շաբաթաթերթի յօդուածագիր գրադէտ Գ. Աճէմեանը (որի յօդուածը շատ հետաքրքիր եւ ծանրակշիռ յօդուած է իր ամբողջութեան մէջ...), բայց որ իմ վէպը պարտութիւն չէ ոչ մեր գրականութեան, ոչ հեղինակի համար, ոտ դուրս է ամէն կասկածից» (Մ. Աթմաճեանին, 1 գելսեմբերի 1967թ.):

Գրախօսականը վէպի թարմ հետքերով գրուածներից առաւել զիալուկն ու արժէքաւորն էր այն առումով, որ նման գնահատման համար գրախօսից ժամանակ չպահանջուեց. «Գրուածը գիրք մըն է: Կարելի է այսօր այրել զայն Վաղը կը գրուի երկրորդ մը: Դարձեալ կ'այրենք: Բայց կարելի չէ այրել պատմութիւնը, կարելի չէ այրել ճշմարտութիւնը եւ ոչնչացնել զայն Պատմութիւնը կարելի չէ փոխել անցեալին մէջ, այլ միան ապագային իսկ այս ընթացքով եւ մտայնութեամբ մենք պատմութիւնն կրնանք փոխել միւսին մէկ կերպով՝ առաջնորդելով զայն դէպի աւելի վասն ու ամօթալին Դէպի նոր նահանջներ, նոր պարտութիւններ»:

<sup>34</sup> Ակնարիում է «Այրուող պրեստաններ»ի աղմուկ հանած տողերը, որոնցում համեմատութիւն էր անցկացւում հարբուխի պատճառով արեան վերահաս հոտը չգտացող, դէպի սպանդանոց հլու-հնազանդ քայլող ազծի եւ հայ ժողովրդի միջեւ:

Գրիգոր Շահինեանը – Գուրգէն Մահարուն,

23 ապրիլի 1968 թուականի, Պէյրութ

**Սիրելի Գուրգէն խան.**

Երէկ «Ահեկան»ի խմբագրական-վարչական կազմի ժողովն էր: Կազմեցինք մեր յառաջիկայ թիւ-նախագիծը, որուն մէջ կը մտնեն հետեւեալ գրութիւնները. Հարփիկ Թամրագեանի մէկ յօդուածը (արդէն պատրաստ) Զարենցի մասին, իմ մէկ յօդուած՝ «Երկիր Նայիրի», «Կեռոքս» եւ «Այրուող այգեստաններ» գործերու մասին (տեսակ մը յառաջաբան գրելիք գիրքիս) եւ գրախօսական մը՝ «Զարենց-նամէ»իդ մասին<sup>35</sup>: Հնկերներս խանդավառութեամբ ընդունեցին իմ մէկ առաջարկս եւ ուզեցին որ իրենց եւ իմ անունով դիմեմ քեզի՝ հետեւեալ խնդրանքով:

Զարենցի հարիւրամեակը նշելու համար կ'ուզենք առանձին բաժինի մը մէջ խմբել վերը յիշուած գրութիւնները եւ անոնց գլուխը դնել քեզմէ յօդուած մը: Գիտեմ, շատ զբաղած ես, բայց դիսեմ նոյնպէս թէ Զարենցի յիշատակին եւ մեր սիրուն չես ուզեր մերժել մեր խնդրանքը: Մեր փափազն է որ Զարենցի բանաստեղծութիւնը վերջուծող յօդուած մը զրկես կամ ձեր երեքի բարեկամութեան մասին յուշ մը: Կը գրէիր թէ միտք ունիս ընդարձակելու Բակունցի մասին գրածներդ. կրնաս անտիպ հատուած մը դրկել մեզի:

Շատ կը խնդրեմ որ չմերժես մեզ եւ մինչեւ Մայիսի վերջը հասցնես գրութիւնդ: Անհունօրէն չնորհակալ կ'ըլլանք եթէ գրութեանդ կցես նաեւ անտիպ հին նկար մը ձեր երեքին կամ Զարենցէն առանձին:

Պէտք չէ մերժես մեր խնդրանքը: Հայ մշակոյթով խանդավառ երիտասարդներ ենք բոլորս ալ (ամէնէն «ծեր»ը ես եմ) եւ մեր անձնական միջոցներով կը հրատարակենք «Ահեկան»ը: Մեծ, շատ մեծ բարիք մը ըրած կ'ըլլաս մեզի: Խան ես, խանութիւնը մեզի՝ դրական հպատակներուդ:

35

«Ահեկանի» 1968-ի թիւ 2-ում լրա տեսան Հարփիկ Թամրագեանի «Եղիչէ Զարենցը, անհատը եւ հասարակութիւնը» յօդուածը, Գ. Շահինեանի ուսումնասիրութիւնը «Երկիր Նայիրի», «Կեռոքս» եւ «Այրուող այգեստաններ» վէսկերի մասին, ինչպէս նաեւ «Հարազատ ու սրտառուչ կենդանագիրը» գրախօսականը՝ «Զարենց-նամէի» մասին:

**Անցած շաբաթ գրած նամակս ստացած ըլլալու ես. Անոր եւ ասոր միասին կրնաս պատասխանել:**

### **Շատ սիրով՝ Գրիգոր Շահինեան**

**Յ. Գ.- Գրութեանդ նոր եւ անտիպ ըլլալը պայման է, բայց եթէ հին բան մը ունիս որ կ'ուզես վերամշակել՝ դարձեալ կ'ըլլայ:**

**Գուրգին Մահարին - Գրիգոր Շահինեանին,  
16 մայիսի 1968 թուականի, Պալանկա  
Շատ սիրելի Գրիգոր աղա!**

**Ճարտարապետ եւ ճարտարագէտ Վարագրատ Յարութիւնեանը<sup>36</sup> Մոսկուայում տեսայ. ինքը Երեւան, ժամանակակից լեզուով՝ իրերունի պիտի իշնէր, ես, հիւսիս, Մերձբալթեան ծովափը բարձրանայի... Եւ ահա ինձ թողեց՝ աշնանը վերադարձնելու պայմանով՝ քո «Զիւներն ի վեր» մենագրութիւնը. Մեծ է ուրախութիւնս: Զպիտի կարգամ, պիտի ըմբռչինե՛մ (ի՞նչ բարբարոս եւ ի՞նչ համեղ բառ...): Առայժմ միայն լուսանկարներն եմ նայել. ի՞նչ գեղեցիկ լուսանկարներ, յուզի՛չ լուսանկարներ... Շատ, շատ ապրես:**

**Երէկ տեղ հասայ, Լիտուա, Բալթիկ ծովափի այս ամառանոցը, ուր ամէն տարի կը հանգստանամ (թէ՞ ընդհակառակը...) 1958 թուականին ի վեր:**

**Երեւանին ուղարկեցի քեզի «Զարենց-նամէ» գրքոյկս Մշակութային կոմիտէի փոստով. ստացա՞ր թէ ոչ: «Վերատպութիւն է»,՝ ասելով մի կողմ չդնես. նոր էջեր կան եւ կը գտնես, եթէ ինտուես...**

**Վէպիս շուրջը բարձրացած փոթորիկը հանգստացա՞ւ: Մի ամիս է, ինչ Երեւանին դուրսն եմ եւ չգիտեմ, ի՞նչ կ'անցնի եւ ի՞նչ կը դառնայ: Վերջին արձագանքները՝ «Պայքար»ում տպուած ոմն Դշնոյեանի ջղաձիգ յօդուածն է, որ գիտեմ, յետոյ՝ վերա՞-**

<sup>36</sup> Վարագրատ Յարութիւնեան (1911), ճարտարապետ եւ ճարտարապետութեան պատմաբան Մահարու Գայրենակիցը.

թէ վարապատուելի Արսէն Կէորկիզեանի ձայնադարձը եւ «Նորօր»ում Ռշտունու ընդդիմախօսականը<sup>37</sup>... ուրիշ բան կա՞յ...

<sup>37</sup> «Վերսապատուելի ձայնադարձը» համանալու համար նախ պէտք է տեսնել Լէյլի Դշխոյեանի «ջղաճգութիւնը».

«Հայաստանը պարաւանքի սեւանը գամեց Մահարուն, իսկ սփիռքահայ որոշ թերթիր, առանց խորանալու հարցի մէջ, ատամներով պաշտպանում են նրան։

Ո՞ր հայ մարդը, պատկառելի հայ վաճառականն ու երեւելին կը մտածէր դըրամ չղրթելու եւ իր կեղտոտ կըքերին յագուրդ տալու մասին Ճիշտ այդպիսիք են Մահարու բոլոր վանեցիները, առանց բացառութեան՝ բարձաստղ, էդամու, փողասէր, մարդասապան, դրամաշորթ, մի խօսքով, մարդկային բոլոր թուլութիւններն ու արատները մարմնաւորող մարդիկ։ Ապա՝ վերյիշենք նրա Օհանէս աղապին, նրա մարդասապան ու վեներական հիւսնդութեամբ տառապող եղբայրներին, յիշենք Զեւոնդ ու Ռուբէն էֆէնդիներին, Փանոս ու Սիմոն աղաներին... աղանե՞ր, էֆէնդինե՞ր, հայ սինլքորնե՞ր»։

Վէպում կան նաեւ «փաշաներ» եւ «ընկերներ», որոնց, չգիտես ինչու, աչքաթող էր արել տիկինն-գրախօսը, տարիների հեռուից հաւատանք նրա վերջին տողերին՝ «Անձամբ. ես չհակացայ Մահարուն»՝ կասկածի տակ առնելով շարունակութիւնը, «ի զուր թող ոչ ոք չշանայ հասկանալ նրան ու արդարացման խօսքեր ասել, դա անհնարին է, նրա հոգին մութ է ընթերցովի համար, իւրաքանչիւր հայի համար, առաւել եւս վանեցու համար» (Դարձեալ Մահարու մասին, «Պայքար», Ռւոլթթառուն, 1968, 13 Ցունուարի, թիւ 10),

Նման գրախօսականներն էին, որ ստիպեցին Մահարուն յաջորդ իսկ օրը մէկ այլ նամակում գրել. «Ես՝ առանց բռնելու դեռ կանգուն եմ ու դեռ կանգնած էլ կը մնամ, եթէ քացի չտան իսկ քացի տուղուներ՝ շա’տ... Այդ քացի տուղուների մէջ չեն պակասում եւ նապաստակները, ի հարկէ, բայց կայ եւ հայկական նշանաւոր առածը, – թող Աստուած հեռու տանի նապաստակի քացուց...» (Աղանուն, 17 Մայիսի 1968թ.)։

Վերապատուելի Ա. Կէօրկիզեանին իր գրախօսականն սկսում է կարծես ընդհանուր ոչինչ չունենալով Դշխոյեանի հետ. «Մահարին ունի իւրայատուկ գրելու կերպ, բառերու յատուկ շեշտ, լեզուի սահունութիւն, ճոխութիւն ու վառ երեւակայութիւն, նկարագրութիւններու գունագեղութիւն եւ երգիծելու անզագելի տաղանդ, որոնք իրապէս հիանալի են»։ Եւ տեղն ու տեղը սկսում է ձայնադարձը. «Ես հարիւր առ հարիւր կը բաժնեմ Դշխոյեանի վիրաւորուած զգացումները Մահարիի հանդէպ ու ես ալ – իմ կարգին – կը մեղագրեմ զինք, որ առանց բացառութեան, իր վէպին հերոսները ներկայացուցած է իբրեւ բացասական տիպեր» (Գուրգէն Մահարիի «Ալրուող այգեստաններու» մասին, «Նորօր», Լոս Անջելէս, 1968, 9, թիւ, թիւ 10, 11)։

Գիտեմ, որ բազմազբաղ ես, բայց եթէ ուզեմ, կ'ուրախացնես ինձ քո տաք նամակներով... Մի ծուլանայ եւ գրիր:

«ԱՀԵԿԱՆ»-ի չեմ տեսեր, ինչո՞ւ: Տեսողութիւնս լաւ է:

Այսաեղ ծովլ է, մարգագետիններ, լճեր, անտառներ... Տրամադրութիւնս կայսերական է. կ'ուզեմ «Հոն, վե՛րը, ձիւնոտ գագաթներն ի վեր...»:

Կամ թէ այս.- «...Մարդը ի՞նք միայն կընայ շինել իր Աստծուն նուիրուած տաճարը, ի՛ր մէջքովը, ի՛ր ձեռքերովը, ի՛ր խելքովիր»<sup>38</sup>:

**ԷՇ, ՊՐՈՎԻՆՑ ցաւզուցի...**

Գուգարդի

**ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆԸ – ԳՈւրգէն Մահարուն,**

24 Մայիսի 1968 թուականի, Պէջրութ

**Սիրելի Գուրգէն խան.**

Այսօր ստացայ Մայիս 16 թուակիրդ։ Անմիջապէս կը պատասխանեմ եսասիրաբար...

թէ հաւատաքննութիւն, «Նոր օր», Լոս Անջելես, 1968, թիւ 12):  
Լ. Շանթից մէջբերումները կատարուած են Գ. Շահինեանի մենագրութիւնից:

38

Իմ 23 Ապրիլի նամակս չես ստացած, քանի ամիսէ ի վեր Երեւանէն դուրս ես: Իսկ այդ նամակս կարեւոր խնդրանք-առաջարկ մը կը պարունակէր: Կրկնե՞մ: (Բարեբախտաբար կարեւոր նամակներուս պատճէնը կը պահեմ՝ քոփիի թուղթը դնելով բուն թուղթին տակը...):

(Հետեւում է նախորդ նամակի կրկնութիւնը.— Գր. Ա):

Հիմա այս նամակը քեզի մինչեւ ամսու վերջը կը հասնի: Եթէ բարի ըլլաս եւ շուտ մը գրես ուզածնիս Յունիսի կէսերուն կ'ունենանք «պատասխանդ» ու եօլա կը գնանք: Մի մերժեր, շատ կը խնդրեմ:

«Զիւներն ի վեր»ի մասին կը գրես: Ես քեզի դրկած եմ արդէն օրինակ մը: Շատոնց: Ինչո՞ւ չես ստացած: Նորէն նամակատունը փեզելիքներ կան որ կը թոցնե՞ն, ի՞նչ է: «Ահեկան» ալ կը դրկեմ, քանի կ'ուզես, բայց եթէ չհասնի՞...: Կ'ուզե՞ս Պալանկա դրկեմ: Իսկ ինծի խոստացած գիրքը՝ «Սովետահայ գրականութեան պատմութիւն» Ա հատոր, ի՞նչ եղաւ:

«Այգեստաններ»ուղ մասին վանեցիներու «Վարագ» պարբերաթերթին մէջ ալ յօդուածի պէս բան մը կար: Քեզի ծանօթ մեղադրանքներով: Կարճ բան մըն էր: Ոչ շատ կարեւոր:

Նոր «Զարենց-նամէ»դ կարդացած եմ: Գրախօսականը ե՛ս պիտի գրեմ: Շատ լաւ է տպաւորութիւնս: Նոր մասերը գտայ... առանց փնտուելու: Թելադրական են եւ գեղեցիկ:

Իմ «տաք նամակներով» ուրախանալ կ'ուզէիր: Իշտէ քեզի «դաղլ» նամակ մը, որ գլխուղ գործ բանալուն համար թերեւս այդքան ալ չուրախացնէ: Բայց միշտ տաք բաներ կարելի չէ սպասել ի վերջոյ կեանքէն եւ մարդերէն: Ի՞նչ ըսիր:

Հասկնալի անհամբերութեամբ պատասխանիդ պիտի սպասեմ:

**Զերմ սիրով՝ Գրիգոր Շահինեան**

Յ. Գ.- Շահնուրէն «տաք» բացիկ մը ստացայ: Քեզի գրածները կը կրկնէր գրախօսականիս մասին: Պատասխանեցի: Ինծի համար շատ հաճելի է այս եռանկիւնաձեւ կապը մեր երեքին մլչեւ:

**Գուրգիկն Մահարին - Գրիգոր Շահինեանին,**

5 Յունիսի 1968 թուականի, Պալանկա

**Շատ սիրելի Գրիգոր աղա. (տարիքով տղաս կարող էիր լինել, բայց հօրս անունը կը կրես, ատոր համար ոչ միայն «սիրելի», այլ «շատ սիրելի»...):**

Երբ ամսու 14-ին (*Մայիսի*) Պալանկա հասայ, 16-ին գրեցի քեզ նոր հասցէս, որն ուժի մէջ է մինչեւ Օգոստոսի 1-ը: Նոյն *Մայիսի* 16-ի՞ն, ոչ 20-ին Երեւանի նամակատունէն ստացայ իմ բացակայութեան ստացուած եւ կուտակուած նամակները, որոնց մէջ եւ քո Ապրիլի 23-ի նամակը... Որոշեցի սպասել, տեսնել, նամակս տեղ կը համնի՞, պատասխան կը ստանա՞մ, ուժի մէջ է խնդիրդ... կը տեսնեմ, որ այս՝ նամակս առեր ես, պատասխանը հիմա՞ ստացայ, «Ահեկանի» ահը կը հաստատես: Զեռքիս տակ միակ «տաքութիւնը»՝ հայերէն լեզուով «Զիւներն ի վեր»ն է, ոչ մի կտոր Ակսել-Զարենց... եթէ հրաժարուեմ, պիտի նեղանաք (դու եւ քո ընտրանին): *Միակ ելքը ափհափոյ «բան մը» գրելն է, եթէ բան մը գուլս չեկաւ բանէն, մեղքը քո' վիզը:* Ասոր աւելցուր, որ չորրորդ օրն է, ինչ հիւանդախ եմ: Ամառանոց եւ հիւանդութիւն, զիրար չըռնող բաներ... ինչպէս կը տեսնես, ձեռագիրս ալ հիւանդ է...

Ուրեմն՝ ժամանակ չկորցնենք. վերնագիրը դո'ւ դիր, կամ գուցէ՝

Հայ հոգեւոր դանձերի հանրագումար՝ Եղիշէ Զարենց

(Համառօտ դրոյթներ չկարդացուած դասախոսութեան)

1. **Եղիշէ Զարենցը քսաներորդ անհանգիստ եւ հակասութիւններով ակաղձուն դարի հրաշքներից մէկն է:** Բանի ու բանահիւասութեան ճարտարապետ ու ճարտարագէտ՝ նա թողեց իր ժողովրդին ու աշխարհին հոգեւոր մի վիթիսարի կառոյց, որն օժտուած է եղիպատական բուրգերի դիմացկունութեամբ եւ հայ ժողովրդի գոյատեւութեան դարաւոր մուրհակի անկոր ու անկոտրում լիարժեքով:

2. **Որպէս հոգեբանութիւն՝ Եղիշէ Զարենցը կրել է իր մեծ հոգեւոր ապրած դարի եւ անհունօրէն տառապած ժողովրդի բոլոր արատներն ու Արարատները:**

3. Բանաստեղծը մեծ է իր անհատական անկրկնելիութեամբ, Եղիշէ Զարենցը՝ անկրկնելին կրկնելո՛ւ, ընդգծելո՛ւ եւ նոր խմաստ ու փայլ տալո՛ւ՝ ասուած բառ ու բանի մէջ (մեծ է):

4. Եղիշէ Զարենցը հայ բազմագարեան բանարուեստի՝ գողթան երգիչներից մինչեւ իրեն ժամանակակից ամենավոքը բանաստեղծի հոգեւոր գումարելիների հանրագումարն է, գումարելիները ծանօթ, հանրագումարը՝ նո՛ր. անակնկա'լ, իր սիրած արտայայտութեամբ՝ ամեհհի՛:

5. Առաջին բանաստեղծը՝ որը արեւելահայ եւ արեւմտահայ դպրութիւնը համարեց միասնական դպրութիւն:

6. Եղիշէ Զարենցի ստեղծած մեծ գրականութեան գումարելիների մէջ կարելի է տեսնել (չի կարելի չտեսնել) Ս. Պէշիկթաշեանին եւ Գամառ-Քաթիպային, Ռաֆֆուն եւ Ալիշանին, Թումանեանին ու Վարուժանին, Դուրեան-Մեծարենցին ու Վահան Տէրեանին....

7. Ու դեռ Սիամանթոյի (Սիամանթոյի<sup>9</sup>...), այո՛, Սիամանթոյի մաքրուած, առնացած, կոթողական ողին «Գիրք ճանապարհի»ի ներքին ոլիթմի եւ արտաքին ձեւաւորման վրայ:

8. Եղիշէ Զարենցը համազգային բանաստեղծ է, այս բառի ամենահայ խմաստով:

9. Եղիշէ Զարենցը, դեռ պատանի, կամաւոր եղաւ ու կարմիր բանակային, դանթէական առասպելի մորմոքը եղաւ նա եւ ինչլազարուած ամբոխների արու ու արի աղաղակը:

10. Եղիշէ Զարենցն ապրեց քսաներորդ դարի առաջին տասնամեակների վիթխարի հակասութիւնները, ստեղծեց «Հփոթ երդերից ու աղմուկներից» իր բանաստեղծական վսիմ ներդաշնակութիւնը եւ ընկաւ ո՛չ կոռւի դաշտում, բայց ընկաւ որպէս կարմիր կամաւոր:

11. Զափեցէ՛ք այս ճանապարհը, «Սոմա»ից մինչեւ «Լեռան աղօթքը»:

12. Եղիշէ Զարենց, աղօթք ու մորմոք, Եղիշէ Զարենց՝ ձի՛չ մըրկահաւի, խմաստութեան բո՛ւ:

13. Նարեկացի եւ... Մայակովսկի: (Մի՛ վախենաք):

14. Երկիր Նայիրիի յաւերժական ճանապարհորդը մեծ յէղարեկումների բրոնզէ թեւերին:

15. Ժամանակի, դարաշրջանի զօրաւոր գերօների ուժը. – (1:10:100:1000:10.000:100.000:1.000.000...), իսկ երբ միաւորը կորցնում է իր տեղը՝ նրանց անզօրութիւնը (0,0000001...):

16. Եղիշէ Զարենցը կանգնեց գերոներից առաջ ու դարձաւ հոգեւոր միլիոնատէր:

17. Դժգոհներ. – Զարենց, Զարենց, միթէ մենք հիմա չունենք նոր բանաստեղծներ, նոր Զարենցներ. – Պատասխան. – Բանաստեղծներ ունենք եւ լաւ բանաստեղծներ, իսկ Զարենց՝ ոչ: Բանաստեղծներ ունենք, այնինչ Զարենցը մէկ է, ուրիշ Զարենց դժուար թէ, ուրիշ Զարենց չկայ: Ու գեռ կը գայ Զարենցը, որ մտնի համաշխարհային Պառնաս իր հետ տանելով հայ հոգեւոր գանձերի հանրագումար՝ արեւ-դրօշը:

\*\*\*

Ահա, սիրելի Գրիգոր, իմ տասնեօթբանեան: Տպելը պարտադիր չէ, եթէ չի համապատասխանում ձեր պահանջներին: Ստանալիս ինդըրում եմ մի երկտողով իմացնես՝ որ ստացա՞ր: Գրեցի չարչարանքով: Երկու օր է, ինչ անձրեւ է: Իմ օգուտը...

Քո՝ Գ. Մահարի

7 յունիսի 1968 թուականի, Պալանկա

Յ. Գ. – «Զիւները» կարդացի մի եւ մեծ չնչով: Շա'տ, շա'տ ապրես եւ ձեռքդ կանաչ, սիրելի Գրիգոր աղա...

Նոյն

Գրիգոր Շահինեանը – Գուրգէն Մահարուն,

6 Յուլիսի 1968 թուականի, Պէյրութ

Սիրելի Գուրգէն խան.

Ստացած եմ 5 Յունիսի նամակը Զարենցի մասին գրած 17 բանիայիդ հետ: Շնորհակալ եմ, սիրելիս, վերաբերումիդ համար: Յօդուածդ պիտի տպենք, հակառակ որ ճիշդ ու ճիշդ չի համապատասխաներ մեր սպասածին<sup>39</sup>: Բայց դրուած պայմաններուն մէջ ուրիշ բան չէիր կրնար ընել վստահաբար: Ախորժակ-

<sup>39</sup> Տպագրուել է վերովիշեալ «չարենցեան» համարում: Այդ «դասախոսութեամբ» էր բացւում ամսագիրը:

նիս կը պահենք ուշից առիթի. «Այելան»ի էջերը միշտ բաց են քու առաջ եւ կը յուսամ օր մը գեղեցիկ անտիպ մը կը տպենք քեզմէ, որ մեր հանդէսին փայլը կ'աւելցնէ եւ բոլորիս խոր հաճոյք կը պատճառէ՝ քեզմէ ըլլալուն համար: Սանկ աղուոր պատմուածք մը՝ Մահարիական սրամտութեամբ համեմուած կամ փիլիսոփայ թախիծով օծուն: Դուն գիտես ո՛ր գործերդ կը սիրեմ մանաւանդ, գիրքիս մէջ ըսած եմ, անոնց երակէն բան մը դրես՝ յիշէ՛ մեզ, որ աղքատ եւ տնանկ ենք եւ քու բարձր խանութեանդ համակիր ծառաները...

**Զարեհնցի** 70 ամեակին առիթով ես ալ բան մը գրեցի, ինչպէս արդէն իմացուցեր էի քեզի: Համեմատութեան պէս բան մըն է երկու մեծ ընկերներուդ եւ քու գործիդ միջեւ: Գիտես արդէն որ նախընտրութիւնս «Կեորէս»ին կ'երթայ՝<sup>40</sup>: «Այժեստաններ»ուն հանդէպ ունեցած վերապահութիւններուս ալ տեղ տուի, բայց ինչպէս սպասելի է արդէն, կողմնակալ կեցուածք չունեցայ: Ոչ քեզի հանդէպ ունեցած սէրս, ոչ ալ որոշ չջերու հանդէպ ունեցած ոչ համակիր կեցուածքս շեղեցին գրիչս: Կը կարդաս՝ կը տեսնես:

**Մելանս Հատաւ:** Կաթողիկոսի պէս՝ կարմիրով շարունակեմ:

**Շաբաթ** մը առաջ հայր եղայ: Աղջիկ մը ունեցանք: Անունը Շաղիկ դրինք: Մինչեւ հիմա շատ ինելօք է: Կ'ուտէ, տակը կ'ընէ եւ կը քնանայ ժամացոյցի կանոնաւորութեամբ: Եթէ այսպէս շարունակուի՝ գէշ չէ: Ի գէպ. ինչպէ՞ս կ'ըլլայ որ ես զաւակներուդ չեմ հանդիպած բնաւ:

40) Առաջնութիւնը տալով «Կեորէսին», գրականագէտը թուարկուած վեպերի շարքում վերջին տեղը յատկացնում է «Այրուող այգեստաններին», գտնելով, որ Մահարու վեպը գեռ պէտք է ճշտի իր տեղը՝ վերամշակումից յետոյ: Այդ առիթով աւելորդ չէ Շահնուրի կարծիքը. «Արդ, «Երկիր նայիրին մէկն է այն ձախողած վէպերէն, որ ոչ իսկ կարելի է կոչել, Փրանական սահմանումով, սորութեան քառական առաջնորդութեան պէտ.- Գր. Ա.» (Գր. Քէօսէեանին, 12 սեպտ. 1969թ.): Կան նաեւ Շահնուրի ուղղակի համեմատութիւնները. «Երկու օր առաջ ստացայ եւ իսկոյն կարդացի Երկիր նայիրին, Քու գիրքդ անկէ բարձր է շատ ու շատ եւ ամէն տեսակէտով: Այս է իմ կարծիքը» (Մահարուն, 20 Դեկտեմբերի 1968թ.), «Եւ Աստուած գիտ թէ հայրէնակարօս Մահարին որքան սիրով եւ որքան գուրգուրանքով մշակած էր իր վէպը, որ - պէտք չէ բնաւ մոռնալ - մեծապէս բարձր է Երկիր նայիրին» (Գր. Քէօսէեանին, նոյն տեղում):

«ԱՀԵԿԱՆ»ը որ լրյա տեսնէ՝ կը դրկեմ Երեւանի հասցիդ: Օգոստոսի վերջերը վնասուէ, եթէ ձեռքդ անցած չըլլայ, եւ վըստահ բողոքէ, որովհետեւ անպայման դրկուած պիտի ըլլայ:

Առողջութիւնդ ինչպէ՞ս է հիմա:

**Շատ սիրով՝ Գրիգոր Շահինեան**

**Գուրդէն Մահարին – Գրիգոր Շահինեանին,**

**20 Յուլիսի 1968 թուականի, Պալանկա**

**Շատ սիրելի Գրիգոր աղա!**

6 Յուլիսի թուակիրդ չորս օր առաջ եկաւ հասաւ: Ուրեմն՝ 10 օրէն, Շահնուրէն նամակ կը ստանամ 7 օրէն, Արամ Հայկացէն՝ 6, քո եւ մի նամակ Երուսաղէմէն՝ 10-12 օրէն: Զեմ զարմանար, Արեւելքի եւ Արեւմուտքի խնդիր է...

17-բանեաս ստացար: Ես էլ գիտեմ, որ «ճիշտ ու ճիշտ» ուղարկածս ձեր ուզածը չի: Այստեղ՝ մի խնդիր. եթէ բանի պէտք չէ, մի՛ տպէք. ճարահատեալի դրութեան մէջ մի դնէք ձեզի: Հաւատա, որ մազաչափի չպիտի վիրաւորուեմ...

Սիրելի Գրիգոր, գաղտնի-գաղտնի գործեր կը բռնես. այդ ե՞րբ ամուսնացար, առանց ինձ հրաւիրելու հարսանիքիդ... ինչեւէ. ինձի կը մնայ չնորհաւորել Շաղիկի աշխարհամուտը: Վանի մէջ ալ Շաղիկ անուն կար. քանի մանկամարդուհի էին, Շաղիկ, օրիորդ Շաղիկ էին, մեծացա՞ն, Շաղօ, Շաղօ դուզու կը դառնային...

Առողջութիւնս ես հարցուել: Յունիսի տասէն՝ ցաւերս թեթևացան. սկսեր եմ գրել «Երիտասարդութիւն»ս (1920-1936, օգոստոսի 9-10-ը, ձերբակալութեանս գիշերը...). 30 էջ գրեցի. մեծ կտաւ է, բայց շատ եմ վախենում, որ չհացնեմ: Գիտես, որ քանի մ'օրէն, օգոստոսի 1-ին՝ 65 տարեկան եմ: Զերչիլէն եւ Մոհեմէն շատ փոքր եմ, բայց Զարենց-Բակունցէն շատ եմ մեծ<sup>41</sup>: Ուստի հարկաւոր է չափը գիտնալ...

Կ'ուզէի վերջացած տեսնել «Երիտասարդութիւն»ս, այլ եւ տպուած տեսնել «Սեւ մարդ»ու շարունակութիւնը կազմող «Մաղկած փշալարեր»ը, «Մշեցի Առաքելը», «Նախօրհակին», «Անտա-

<sup>41</sup> Տարիքով...

ռային հէքեաթ» եւ «Ուրախ գիշեր» պատումները, որոնք վաղուց եմ յանձնած հրատարակութեան իբրեւ երրորդ հատոր:<sup>42</sup>

Այսքան ալ քեզի խոստովանութիւն: Եթէ մեր Սիմոն Սիմոնեանին գրէի այս տողերը, կը վերցնէր եւ կը տպէր (առանց ի հարկէ վատ մտադրութեան...), բայց ես գիտեմ, որ դու զուսպ մարդ ես եւ այդ բանը չես անի...

«ԱՀԵԼԱՆ»ը փոստով մի՛ դրկէր: Աշնան Բէյրութէն շատերը պիտի գան Երեւան Երեւանի 2750-ի (կը տեսնե՞ս, ինձմէ բաւական մեծ է...) յոբելեանին: Գուցէ դո՞ւ էլ... կը բերես, կամ մէկի միջոցով կ'ուղարկես: Ես մի քանի օրէն դուրս պիտի գամ Պալանկայէն Վիլնիւս-Մոսկուա, օգոստոսի 29-ին Երեւան մտնելու համար: Նամակ-«ԱՀԵԼԱՆ»՝ Երեւանի մէջ կը սպասեմ, օգոստոսի 28-էն յետոյ:

\* Արամ Հայկազը աշնանը պիտի ժամանի Երեւան, ըստ իր վերջին նամակի. Համաստեղն էլ խոստացաւ, բայց... մեր մե՛ծ Համաստեղը: Ինչէ՞ն է, որ մեծ մարդիկ երբ կը մեռնեն շա՛տ կը մեծնան...

Զերմ բարեւներ տիկնողդ, Շաղիկին՝ կսմիթներ. դեռ փոքր է, կարելի է... Քեզ՝ մեծ, մեծ բարեւներ եւ կարօտներ...

Քո՝ Գ. Մահարի

Գրիգոր Շահինեանը – Գուրգէն Մահարուն,  
10 Նոյեմբերի 1968 թուականի, Պէյրութ

Սիրելի Գուրգէն խան.

Բարեւներդ եւ հիւանդութեանդ լուրը միասին հասան ինծի. ուրախութիւն եւ տիւրութիւն՝ խառն, կեանքի այլ երեւոյթ-

<sup>42</sup> Երրորդ հատողը լուս տեսաւ գրողի մահից 6 տարի անց՝ 1975 թուականին՝ առանց սիբիրեան գործերի՝ Վերջիններս ընդգրկուեցին հինգերորդ հատորում (1989):

<sup>43</sup> Մահարին Պ. Դուրեւանի «Տրտունք» բանաստեղծութեան մի բառի ճշտման կապակցութեամբ («Աստուած» թէ՞ «աստղեր»...) անձնական հեռագիր էր տուել «Սիրաք»ի իմբագիր Ս. Սիմոնեանին Հասցէի անձտութեան պատճառով պատասխան-հեռագիրը հետ էր եկել ինչի մասին խմբագիրը զարմանքով գրել էր թերթում եւ Մահարուց ստացել հետեւեալ «նամակ»-երկեակը.

Երբ Աստուած բաժանում էր լրջութիւն ու տաքթ,

Որտե՞ղ էիր, մա՛րդ...

ներու պէս: Շուտ աղէկցիր, սիրելիս, որքան ալ 65 տարեկան ըլլաս արդէն, կարեւոր բաներ ունիս ըսելիք: Սէն-Սիմոնի կոմսին մանրավիշպը գիտե՞ս: Պատուիրած է եղեր իր սպասաւորին որ ամէն առայտ երթայ, արթնցնէ զինք ըսելով. «Արթնց՝ք, պարոն կոմս, մէծ գործեր ունիք կատարելիք»: Դուն սպասաւոր չունիս, եւ լաւ է որ չունիա, բայց եթէ Փորմիւլը հաւնեցար՝ կրնաս յարմար անձ մը գտնել նոյն խօսքերը բարեփոխուած ձեւով կրկնել տալու համար...

Իմ պարագայիս՝ բոլորովին տարբեր բան պէտք է: Կինս կամ աղջիկս պէտք է քունս խանգարեն եւ յիշեցնեն թէ պզտիկ եւ տաղտկալի գործեր ունիմ կատարելիք: Այս, սիրելիս, սրբագրութենէն աչք բացած չունիմ: Ինչպէս կը տեսնես՝ նամակնելս անգամ ժամանակին չեմ հասնիր գրելու:

Այս տարի Փրանսերէնի յաւելեալ դասեր ալ յանձն առի՝ աղջիկիս պատճառած նիւթական «աւեր»ը դարմանելու համար: Դասերուս շաբաթական ցանկը այսպէսով 30 պահի բարձրացաւ: Տանելի է, բառի արմատական խմասո՞վ միայն. այսինքն տակաւին բեռի տակ չեմ կքած, բայց եթէ լսես, որ կքեր եմ՝ շատ չզգարմանաս: Երեւակայէ՛, օր կ'ըլլայ որ ժամը 9-ին արդէն անկողին կը մտնեմ, բոլորովին ջարդուած: Մուհամմէտը վերջը բարի բերէ...

«Ահեկան»ի «քու» թիւդ ստացած ըլլալու ես մինչեւ հիմա: Ի՞նչ են տպաւորութիւններդ, շատ ջարդա՞ծ եմ գործդ, անարդար եղա՞ծ եմ: Այս օրերս միացեալ թիւ մը կը պատրաստենք: Տարեվերջին լոյս պիտի տեսնէ: Ուշի մնացած էինք՝ մը տածեցինք զոյդ թիւ մը հրատարակենք եւ 69-էն սկսեալ պահէնք մեր բնական եռամսնեայ կշռոյթը:

Շատ պիտի ուգէի ամիս մը առաջ ուրիշներու հետ ես ալ եկած ըլլալ Երեւան: Արձագանքներէն դատելով՝ փառաւոր օրեր ապրած էք: Մաղթենք ուրիշ առիթ մը, մօտալուտ առիթ մը, ունենամ դալու դարձեալ եւ, ուրիշ հաճելի բաներու կարդին, համբոյրս դրոշմելու 65 ամեայ ճակատիդ: Կ'երեւակայէ՞ս. տակաւին երէկ «60 ամեակի հանգրուան»դ կ'ողջունէի գիրքովս: Դուն ծեր ըլլալու ծեր ես, բայց ես ալ կը ծերանամ կոր, Գուրդէն ինան...

Նոր Տարին մօտ է: Ես կը փորձեմ դարձեալ գրել քեզի, բայց եթէ Սէն-Սիմոնեան պայմաննելս ձեռնտու չըլլան՝ ներու-

ղամիտ եղիր եւ հիմակուընէ լնդունէ Շաղիկին, Արաքսիկին եւ  
իմ լաւագոյն մաղթանքները՝ քեզի եւ քուկիններուդ համար:

Համբոյըներով՝ Գրիգոր Շահինեան

Գուրգէն Մահարին – Գրիգոր Շահինեանին,

23 Նոյեմբերի 1968 թուականի, Երեւան

**Շատ սիրելի Գրիգոր աղա.**

Ս. թ. Նոյեմբեր ամսի 10-ի թուակիրդ ստացայ: Բարենե-  
րըս էլ ճիշտ են, հիւանդութիւնս էլ: Հասել էի Անդրաշխարհի  
մատոյցներուն եւ պարզ ու մէկին կը տեսնէի սահմանագլուխը,  
ուր հաւաքուած էին հարազատներս եւ ապա Զարենց եւ Ակսել,  
իսահակեան, Դեմիրճեան, անդրաշխարհի թէրթէրի թղթակից-  
ներ, ինթերվյու ընելու համար, սա պէս.

Թղթակից:— Ինչպէս մեռաք, պարոն Մահարի, յաջո՞ղ, բա-  
րեյաջո՞ղ...

Ես.— Յաջող եւ բարեյաջող, չնորհակալ եմ բժիշկներիս օդ-  
նութեան համար:

Թղթակից:— Ինչպիսի՞ն են Զեր «Երկիր-Անդրաշխարհ»  
ճամբորդական տպաւորութիւնները:

Ես.— Երկրի ծիրէն դուրս գալուց յետոյ ինձ զարմացըց  
Անդրաշխարհի ճանապարհաշխարական թափը: Մէկ պակա-  
սութիւն միայն ունի այդ ճանապարհը... վերադարձի ճամբայ  
չկայ...

Թղթակից:— Զէ՛, չկայ եւ աւելորդ է...

Ես.— Ինչո՞ւ աւելորդ, ջա՞նըմ. ահա ես եկայ եւ յիշեցի, որ  
«Հայաստան» հրատարակչութիւնը իմ երկու հատորեակները թը-  
թու է դրել եւ նայում է եղանակին: Զպէ՞տք է երթալ եւ կար-  
գադրութիւն մը ընել...

Թղթակից:— Մոռացիր երկրային մանրուկ գործերն ու հոգ-  
սերը. քեզի կը սպասեն երկնային մէ՛ծ գործեր...

<sup>44</sup> «Թթու դրած» հատորներից մէկը լոյս տեսաւ գրողի մահից վեց, միւսը՝  
տասնվեց տարի յետոյ Եթէ Մահարու կենդանութեան օրօք Երկերի տաւ-  
ջին երկու հատորները լոյս տեսան մէկ տարում, ապա մնացած երեք հա-  
տորները՝ 22 տարում:

**Ես.** – Զարենցի հետ նարդի՞ պիտի խաղամ:

**Թղթակից.** – Զէ՛, ջա՛նըմ...

**Ես.** – Քոնեա՞լ խմեմ պիտի... Ես վաղուց քոնեալ բերանս չեմ առեր...

**Թղթակից.** – Զէ՛, չէ՛... Քոնեալ, այդ էր պակաս: Որո՞շ է, դրա՞խտ պիտի երթաս, չէ նէ...

**Ես.** – Զարենց որտե՞ղ է...

**Թղթակից.** – Զարենց... Զարենց սուրբ է, ի՞նչ համեմատութիւն քո եւ նրա մէջ:

**Ես.** – Ան մեծ սուրբ մըն է, ես՝ փոքր տեսակի... երկրորդական...

**Թղթակից.** – Սուրբի մեծ-փոքր չկայ, սուրբը սուրբ է...»;<sup>45</sup>

<sup>45</sup> Նոյն օրերին Մահարին վերամշակեց նամակացին մանրապատումը՝ տալով գըրան աւելի լայն հնթատեքստ եւ «Հարցազրոյց այն աշխարհում» խորագիրը. «Սովորաբար, ինչպէս գիտենք, մարդը մի անգամ է ծնւռմ եւ մի անգամ մեռնում:

Բայց ահա երազում... Այս քանի անգամ է, որ մեռնում եմ...

Եւ այսպէս, անցեալ օրը ես մեռայ:

Այս անգամ անգրաշխարհի անհմանագլխում ինձ հանդիպեցին տեղական թղթակիցները. Յանկարծակիի եկայ.

– Ներեցէք, դուք...

– Մէնք ջրեշտակապետական, առաքելական սատիճաններ ունենք, – պատասխանեց նրանցից մէկը, – բայց զբաղում ենք լրագրութեամբ. ասացէք, իւզնդրեմ, ինչպէ՞ս էք ձեզ զգում, ինչպէ՞ս մեռաք...

ԵՍ. – Բարեյածող. Շնորհակալութիւն իմ բժիշկներին:

Թղթակից. – «Երկրի և Անդրաշխարհ» երթուղին ինչպէ՞ս գտաք:

ԵՍ. – Սքանչելի Միայն մի թերութիւն ունի՝ շարժումը միակողմանի է, ետք գնալ չի կարելի:

Թղթակից (Համլետապարի). – Ո՛չ, ո՛չ, այստեղից չի վերադարձել գեռ ոչ մի ճամբորդ. Բայց դրա փոխարէն շատ են մեզ մօտ այնպիսիները, որոնք չնայած այստեղ են գրանցուած, բայց փաստօրէն ապրում են երկրի վրայ Եթէ չեմ սփառում, նրանք կոչւում են անմահներ. Վերցըքք թէկուզ Կոմիտասին, Թումանեանին, նրանք աւելի երկրի վրայ են ապրում, քան... (Տեղանքով) անմահները... ինչպէ՞ս չէ, եթէ մարդը մահացաւ՝ ուրիմն մահացաւ, էլ «անմահն» որն է...

ԵՍ. – Այս, բայց նրանց գործերը...

Թղթակից (Ընդհատելով). – Նրանց գործերը նոյնպէս փոխադրում են այս տեղ, նայում են, վերանայում, արդարները գրանցում են դրախտում,

մնացածը՝ դժոխքի Երկնային հաստատութիւններն ու գերատեսչութիւններն աշխատում են անվթար, իսկ գուք... Շատերին գուք արձանների էք կանգնեցրել, որոնք մեզ մօտ միայն պատժարանների են արժանացել եւ ընդհակառակը, շատերին գուք իսաչել էք, անարգել եւ նետել մոռացութեան գետը, այնինչ մեզ մօտ նրանք դրախտային քաղաքացիներ են... Այսպէս աշխատէլ չ' կարելի: Ի՞նչ նորութիւններ կան Երեւանի գրական աշխարհում: ԵԱ.՝ Ձանապարտիւն: Գրադները գոտում են, քննադատները... Քննադատները չեն քննադատում:

**ԹՂԹԱԿԻՑ.՝ Ի՞նչո՞ւ:**

ԵԱ.՝ Գտնում են, որ այդպէս աւելի լաւ է առողջութեան համար:

**ԹՂԹԱԿԻՑ.՝ Կիրովականում ի՞նչ աղմուկ է:**

ԵԱ.՝ Առանձնապէս ոչինչ հիմնադրուեց Հայաստանի գրողների միութեան Կիրովականի մասնաճիւղը: Մասնաճիւղը շուտով կը ստանայ աւտոմեքենայ, զրամեքենայ, քարտուղարուհի՝ զմանցի կրնակով եւ գրականութեան զարդարման համար խիստ անհրաժեշտ նման այլ բաներ:

**ԹՂԹԱԿԻՑ.՝ Ի՞նչ զրութեան մէջ են արձակն ու չափածոն:**

ԵԱ.՝ Լաւ: Առաջատարը մնում է բանաստեղծութիւնը: Կան նաեւ հիմնալի արձակագիրներ: բայց... Վերջերս լոյս տեսան Շիրազի, Սահեանի, Հր. Յովհաննիսեանի, Էմինի գրքերը... Զէ, զեւ շատ հաց ու պանիր պիտի ուտի մեր արձակը, չափածոյին հասնելու համար:

**ԹՂԹԱԿԻՑ.՝ Մալարեց\*, պոչզիա...**

ԵԱ.՝ Նոյն կարծիքին եմ եւ ես: Առաջատարը բանաստեղծներից Գէորգ Էմինը միուրաք թողեց եւ պիտի տաել, որ դա մեծապէս ազգեց հէնց իր պոչզիայի վրայ: Լրջացաւ, խորացաւ եթէ ես էլի մի անգամ առիթ ունենամ խառնուելու սրբզիայի գործերին, ապա ամենայն լրջութեամբ խորհուրդ պիտի տամ մի քանի պոչտաների, որ միուրաք թողնեն...

**ԹՂԹԱԿԻՑ.՝ Արձակագիրների մէջ միրուք երեւաց...**

ԵԱ.՝ Ո՛չ, բայց լաւ արձակագիրներ, թէկուզ անմիրուք՝ կան: Նրանք դըժուարութեամբ են մտնում գրականութեան գիրկը, սակայն ի վերջոյ մըտնում են:

**ԹՂԹԱԿԻՑ.՝ Հետաքրքիր է:**

ԵԱ.՝ Իիստ հետաքրքիր նրանք իրենց վէպերում պատմական բերդեր են կառուցում, մէջը լցնում հայ ոսպիլիներ, յետոյ թշնամու գորքը բերում են, շրջապատում բերգը եւ կոիւն սկսում է: Մի սպանուած հայի դէմ տասը ոսոխի գլուխի է թուչում, ու վէպը թէժանում է: Ցետոյ հայ սակաւաթիւ զինուորները դուրս են գալիս բերդից, յարձակուում թշնամական բանակի վըրայ եւ ոչնչացնում նրանց մինչեւ վերջին մարդը... Նման վէպերը սպառւում են ժամերի լնիթացքում:

**ԹՂԹԱԿԻՑ.՝ Օլարլա՛...**

ԵԱ.՝ Օլարլա ու մի բան էլ աւելի ժողովրդին հաց է պէտք տալ, ասում են որոշ «հացթուիներ»՝ թէկուզ դա լինի սեւ... Ու տալիս են: Սեւ հա՞յ:

Ո՞չ սեւ հայ յիշեցնող ինչոր բան, որը կոչում է ոչ այլ ինչ՝ «Հայրենասիրական վէպ»։ Ըստ էռութեան այսաեղ ոչ հայրենիք կայ, ոչ աէր կայ, ոչ վէպ։ Կայ միայն գրող կոչուելու, դիրք տպելու յաջողութեամբ պատկուած մարմաջ... Դեմիրճեանին պիտի հանդիպէ՞մ...

**ԹՂԹԱԿԻՑ.՝ Նայած...**

**ԵՍ.՝ Ի՞նչ նայած։ Ես ուզում եմ անպայման տեսնել նրան եւ ասել մի քանի խօսք. «Վարդանանք» գրեց եւ չգրեց, թէ ինչպէ՞ս գրեց, ինչպէ՞ս պէտք է գրել եւ ինչպէ՞ս գրուեց այս հիանալի վէպը, որպէսզի նորերը սովորէին, թէ ինչպէ՞ս պէտք է գրել հայրենասիրական պատմավէպը։**

**ԹՂԹԱԿԻՑ.՝ Նորարարութեան մասին ի՞նչ կ'ասէիք...**

\* Կեցըե՛ս (ռուս.):

**ԵՍ.՝ Ի՞նչ կարող եմ ասել Դա մի ճանապարհ է, որը վերջ ի վերջոյ տունում է մինչեւ Գիրգոր Նարեկացի։ Այս', այս', պարզում է, որ Նարեկացին ամենամեծ նորարարն է եղել եւ ինքը ոչ մի տեղեկութիւն չի ունեցել այդ մասին...։**

**ԹՂԹԱԿԻՑ.՝ Այն ժամանակ գիտական քննադատութիւն չի՞ եղել... Կարող էին մի կերպ գլխի գցել, հասկացնել...։**

**ԵՍ.՝ Գիտական քննադատութիւն եղած տեղը Նարեկացի՞ կը լինի... Զէ, չի՞ լինի... Ի դէպ, Զարենցին պիտի հանդիպէ՞մ։**

**ԹՂԹԱԿԻՑ (Երեսը դարձնելով գէպի հարաւ).— Այ, տեսնում էք, այս տիբողջ աշխարհամասը գրախափ հայկական սեկտորն է։ Ահա, ահա քո Զարենցը։ Յետինը Միսաք Մեծարենցն է, գուրս են եկել գրօսանքի։ Բայց զուի՞նչ գործ ունեն Զարենցի հետ։ Զարենցը սուրբ է...։**

**Այսեղ էր, որ ես զարթնեցի» («Գրական թերթ», Եր., 1969, թիւ 1)։**

**Գր. Շահնինեանին գրուած տողերն առաջին փորձը չէին Անդրաշիարհի նաւմակադրական պատկերման։ Դրան նախարդել էին ուրիշները։**

**«Նախ՝ Նարեկացու խուցին քով ինձի յատկացուցած խուցին պիտի անդրադառնում։ Առմիկա շա՛տշա՛տ կարեւոր ու սկզբունքային խնդիր է...։**

**Եղա՞ւ.՝ «Ազօթարան»ը դուն գրես, ե՞ս ապրեմ Նարեկացու հետ կողք-կողքի... — Զէ՛, անարդարութիւն չէմ սիրել եւ չէմ ուզեր, կամ չէմ սիրել գրաւել աթոռ մը, որն ինձի չիշնար։ Նարեկացու խուցի մօտի խուցը քեզի կը պատկանի. գալով ինձի... ես ձեզմէ հեռու չպիտի ապրիմ եւ շաբաթ մի անգամ վան պիտի երթամ ձեզի համար մասթիքայ, բասթուրմայ, չամիչ, կաղին, ընկոյզ եւ նման բարիքներ հասցնելու համար։ Բերածներս անվթար տեղ կը հասցնե՞մ թէ ոչ (մանաւանդ օղին...), այդ չէ կարեւոր, կարեւորն այն է, որ ա'յլ է իմ գէրը» (Համաստեղին, 26 սեպտեմբերի, 1966թ.)։**

**«Գալով Պարոնեանի եւ Օտեանի հանգամանքին, շա՛տ ես միամիտ։ Վերջերս վահճանուած Ալազանը երազիս եկաւ եւ յայոնեց յնցող նորութիւններ Անդենականէն։ բացարձակ մեղաւորներ եւ բացարձակ անմեղներ չկան այնտեղ. արձակագիրներն ու բանաստեղծները մէծ մասամբ գրախտաբնակներ են եւ**

### Եւլն. եւլն. եւլն.:

Սիրելի Գրիգոր աղա. «Ահեկան»ը չեմ կարդացեր, ոչ «քո» համարը. ոչ «իմ»։ Ես արդէն քեզի նախազգուշացրի, որ իմ համարը մարդու միջոցով զրկեաւ։ Անհամբեր եմ կարդալու, թէ ինչպէ՞ս ես ջարդեր վէպս։ Ինչո՞վ։

Այսպէս, տարին վերջանում է. քիչ էր մնացել գնացող տարին ինձ էլ տանէր, բայց այս անդամ էլ կինս, Անտոնինան, աւելի ուժեղ եղաւ, քան այդ Մահ կոչուած փուշտը։ Ճիշտ է, չկըրցաւ ինձ տանէլ, բայց շատ բան տարաւ. գրել չեմ կարող, թոյլ եմ, հո՛յլ, ծո՛յլ...

Մա՛նը, ծա՛նը 65-ամեալ։

Ուրեմն կը սպասեմ «Ահեկան»իս։ Ուրեմն Շաղկին եւ Արաքսիին շատ ջերմ բարեւներ։ Ես սպասաւոր չունեմ, բայց սպասուհի ունեմ. սորվեցուցի, որ ամէն առատու ինձ վեր հանէ «Վերլայցէք, ընկեր, Ահեկանը մէծ-մէծ քայլերով դալիս է...» խօսքերով։

իրենց մեղքերու չափերուն նայելով՝ գժոխք կ'երթան պատժուելու, նորէն ետ զալու համար. քննադատները, խմբագիրներն ու հրապարակախօսները գժոխտանակներ են եւ իրենց հաս ու կոսր լաւ գործերու համար մէկ-մէկ զրախան կ'արձակուին քիչշատ թէթեւնալու Բացառութիւն է արուած ապրիլեան զոհերու (գրավանքնապատճական եւ այլն) եւ 37 թուռկանի զոհաբեկ համար, որոնք գրախտավին յարկաբաժիններուն մէջ կը ճառողին եւ խափամաղի կամ բիլեարդ կը խաղան, Այս գործները, որոնք Քիւրդիստանի եւ Սիբիրից համն առած են, գրախտի արուարձաններում գոթէջներ պիտի ունենան, եւ Ալազանը մեռնելին կը վայրիեան չահցած իր քոթէջը մտած է եւ ծխախտու մը վառած է. կան նաև ազգային կլուցներ, ուր կը հաւաքուին անդէնականները եւ կը յիշեն իրենց անցաւոր կեանքը։ Հայկական ակումբին մէջ կարելի է տեսնել նարեկացուն եւ Սիամանթոյին, Քուչակին ու Վարուժանին, Օշականին՝ որու մէկ ոտքը դրախտին մէջ է, իսկ միւռը...» (Ա. Հայկազին, 25 մայիսի, 1966թ.).  
«Մի վախնար, ուր ալ որ երթամ, հասցէս պիտի անսպակաս ընեմ. ըսի՝ «ուր ալ որ երթամ», բայց սուս ըսի քիչ մը, որովհետեւ եթէ Անդենստան երթամ (ո՞վ գիտէ...) հասցէս զիտմամբ չպիտի դրկեմ եւ նամակ ալ չպիտի դրեմ... որովհետեւ եթէ գրեմ պիտի գրեմ՝ «Սիրելի Հայկազ, այսօր Պարոնեանի հետ թալլու իսուցանք», կամ «այսօր Օտեանի հետ «ՄԵֆիստոփել» կազինոյի մէջ սուրճով սախի քաշեցինք», գուն, երկրային գործերդ մոռցած՝ հասցէս առած մօսս պիտի վագեսու չի՛, մի պնդէր, ես գիտեմ, ե՞րբ պիտի հասցէս զրկեմ, երբ՝ ոչ» (Ա. Հայկազին, 26 մարտի, 1966թ.).

Կը ճանչնա՞ս Վեհանուշ թէքեան քանամեայ բանաստեղծու-  
հուն, որն ապրի ի Բէյրութ... չնորհքով աղջիկ է:

Տօները շատ լաւ անցան: Ես էլ եմ ցաւում, որ չկայիր: Տօ-  
նի պակասութիւն չունենք մենք, 1969-ին Կոմիտասի եւ թումա-  
նեանի 100-ամեակն է: Վեր կաց եւ արի:

Յոդնեցի: Գրիր:

Քո՝ գ. Մահարի

Գուրգէն Մահարին - Գրիգոր Շահինեանին,

16 Մայիսի 1968 թուականի, Պալանկա

Շատ սիրելի Գրիգոր աղա.

Մի տարի էլ անցաւ: Ավասու չէ՞ր անցեալ տարին՝ մինչեւ  
Օգոստոսի 1-ը: Այս, ձախորդութիւններն սկսուեցին Օգոստոսի  
1-ից, իմ ծննդեան օրից...

Ինչեւէ!

Այս ձախ «Ահեկան»ը մինչեւ հիմա ինձ չդտաւ: Փորձիր  
մի օրինակ ուղարկել Աբրահամ Ալիքեանին: Կարծում եմ, որ կը  
ստանամ:

Ինչպէ՞ս ես, քե՞զ, հա՞լ: Ես՝ որ գուրզի եմ ե'ւ մէկից ե'ւ  
միւսից:

Գրիր:

Զերմ բարեւներ տիկնոջդ եւ դստերդ:

Քո՝ գ. Մահարի<sup>47</sup>

ԳՐԻԳՈՐ ԱՃԵՄԵԱՆ

<sup>46</sup> Այդ օրը Մահարին Մոսկուայում ենթարկուեց չնախատեսուած վիրահատու-  
թեան:

<sup>47</sup> Ուղիղ մէկ ամիս անց այս նամակից Մահարին կնքեց իր մահկանացուն: